

Եր երկրի ղեկավարը հայտարարում է, թե հայերը պատմության ընթացքում երբեք Հայաստանում բացարձակ մեծամասնություն չեն կազմել, սա պարզապես պատմական անգրագիտություն է, այլ շատ ավելի վտանգավոր քաղաքական խոսույթ է, որում թաքնված է ազգային ինքնության, պատմական իրավունքի եւ պետական հիմքերի արժեզրկման փորձը:

Կարդացեք՝ էջ 4

Ատեք, այսպես կոչված, Հակակոռուպցիոն կոմիտեի ֆեյսբուքյան էջ եւ սահմռկեցուցիչ պատկերի ականատես կլինեք: Կարելի էր մաթեմատիկական պարզ հաշվարկ անել՝ գումարելով ձերբակալվածների թվերը եւ ստանալ միասնական պատկեր, բայց դա անհնար է, որովհետեւ ձերբակալված անձանց անհատական տվյալները, նույնիսկ թիվը թաքցվում է:

Կարդացեք՝ էջ 5

Տիգրանաշենի հանձնումը վարչախմբի հակասյունիքյան հերթական քայլը կլինի: Մեծագույն անհեթեթություն է այն անկլավ համարելը: Իշխանությունն իսկապես տեղյակ չէ՝ ինչպես է այն հայտնվել Նախիջեւանի Ինքնավար Հանրապետության կազմում, թե՞ հերթական անգամ կուրորեն ու ստրկաբար կատարում է Ալիեւի հանձնարարությունը:

Կարդացեք՝ էջ 6

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 84 (4219), 26 մայիս, երեքշաբթի, 2026

www.hraparak.am

Արցախի թեմի առաջնորդ Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը, որ Նիկոլ Փաշինյանի կողմն անցած ու Վեհափառին ուրացած 10 տիրադավներից մեկն է, «անհետացել է ռադարներից»: Արցախցիները նրա մասին տեղեկություն չունեն, նա դադարել է այցելել Երեւանում իր գլխավորած թեմի առաջնորդանիստ, քանի որ այնտեղ թեմական խորհրդի եւ աշխատակազմի համար անցանկալի հյուր է: Արցախին վերաբերող ցանկացած հոգեւոր ծիսակարգի համար արցախցիները դիմում են Դադիվանքի հոգեւոր առաջնորդ, ներկայում Եռաբլուր պանթեոնի եկեղեցու սպասավոր Տեր Հովհաննեսին, նրան են ճանաչում իբրեւ առաջնորդ: Չնայած արցախցիները դիմել էին Վեհափառին՝ Վրթանես եպիսկոպոսին կարգալույծ անելու կամ թեմական առաջնորդի պաշտոնից զրկելու խնդրանքով, եւ առաջարկել էին թեկուզ ժամանակավոր տեղապահ նշանակել, բայց Վեհափառն անարձագանք է թողել նրանց խնդրանքը: Թեմի անդամների տպավորությամբ՝ հավանաբար, չի ցանկանում սրել իրավիճակը՝ աչքի առջեւ ունենալով Մասյացոտնի թեմում տիրող վիճակը. կարգալույծ արված Գեւորգ Սարոյանը՝ իշխանական աջակցությամբ, խառնակչությամբ է զբաղված եւ անգամ ֆինանսներն է տնօրինում:

Գլխավոր դատախազությունը դեռ անցած տարվանից Կադաստրի կոմիտեի դեմ հայց է ներկայացրել վարչական դատարան՝ պահանջելով անվավեր ճանաչել Երեւանում Լեռնային Ղարաբաղի կառավարության սեփականության իրավունքի պետական գրանցումը: Խոսքն Արցախի ներկայացուցչության շենքի մասին է, որն ուզում են վերցնել արցախցիների ձեռքից: Մայիսի 22-ին դատարանը պետք է որոշում կայացներ, սակայն այն հետաձգվել է. հավանաբար, չեն ուզում, որ ընտրություններից առաջ աղմուկ բարձրանա, եւ դրա պատճառով քվեներ կորցնեն: Բացի այն, որ Փաշինյանը որոշել է ջնջել Արցախի հետ կապված ամեն ինչ եւ անգամ հիշողությունն ու «Արցախ» բառն է արգելում, այս շենքը խլելը կենաց-մահու հարց է դարձել նաեւ այն պատճառով, որ այստեղ սովետական տարիներին Երեւանում Ադրբեջանի դրամատիկական թատրոնն է գործել: Անցած տարի Ադրբեջանի նախագահն իր երկրում անգամ նշել է Երեւանում Ադրբեջանի դրամատիկական թատրոնի 120-ամյակը, որին հաջորդեցին ԱԱԾ-ի կողմից իրականացված օպերացիաները՝ Արցախի ներկայացուցչություն ներխուժմամբ եւ այս դատական հայցով:

Ինքնակազմակերպում

Մի դրական բան եմ նկատել վերջերս՝ հանրային տարբեր գործիչներ իրենց վրա են վերցնում պետական կառույցների ֆունկցիաները եւ ավելի մեծ գործ են անում, քան այդ կառույցները: Թերեւս հենց դա է կոչվում քաղհասարակություն, որը միայն դիտորդ չէ, պահանջատեր չէ, այլեւ ակտիվ մասնակից է, հանրային վերահսկող, պետական կառույցներին աշխատեցնող ու փոխարինող: Արթուր Չախոյանի մասին շատերը գիտեն՝ նա մենմենակ մի ողջ ինստիտուտի աշխատանք է կատարում, հետեւում է Երեւանի քաղաքապետարանի կառույցների աշխատանքին, հանրային գումարների ծախսմանը, մայրաքաղաքում կատարվող աշխատանքների որակին՝ ասֆալտ, նորոգում, մանկապարտեզների կառուցում եւ այլն: Երեւանի ավագանու անդամ Քրիստինա Վարդանյանը մենմենակ հսկում է կանաչապատման, ավելի ճիշտ՝ կանաչ տարածքը ոչնչացնելու գործողությունները: Մանրակրկիտ ներկայացնում է կտրված ու տնկվող ծառերի բնութագրերը, ահազանգում է ամեն մետր հատված կանաչ տարածքի մասին: Իհարկե, հաճախ այդ ահազանգերն ընդամենը կատարված բարբարոսության արձանագրումն են, բայց վստահ եմ, որ նաեւ ինչ-որ բան կանխվում է, եւ գոնե բարբարոսների անուններն ու կատարածն են ֆիքսվում: Այս բանակի մեջ են նաեւ մեր լրագրողները, որոնք անշահախնդիր կերպով պայքարում են մեր հայրենիքի ամեն մետրի, ամեն քաղաքացու համար: Վերջերս լրագրող Սյուզի Բադոյանը, օրինակ, մենմենակ եւ իր համառության շնորհիվ բացահայտեց մանկապղծության դեպք, որն իրավապահները փորձում էին կոծկել: Ոչ միայն բացահայտեց, այլեւ ստիպեց, որ մեղավորների դեմ քայլեր ձեռնարկվեն, նրանք պատժվեն: Ինչքան պետական կառույցները մատնվում են անգործության, եւ պետությունն իր ֆունկցիաները հրաժարվում է պատշաճ կատարել, այնքան հաճախ են ի հայտ գալու մարդիկ, որոնք ստանձնելու են այդ ֆունկցիաները:

Լրտեսության եւ պետական դավաճանության մեջ մեղադրվող Անդրանիկ Թեւանյանի գործով, ըստ իրավապահ մեր աղբյուրի, եւս մեկ պատգամավորության թեկնածու, նախկին պատգամավոր է անցնում, որի ուղղությամբ սկսել են քայլեր ձեռնարկել: Խոսքը «Հայաստան» դաշինքի նախկին պատգամավոր Արեգնազ Մանուկյանի մասին է: Ըստ Քննչական կոմիտեի, Թեւանյանը 2 տարի առաջ «Ռուսիա Կովկաս» կենտրոնի տնօրենին 622 հազար դոլարի դիմաց պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ է փոխանցել 2024 թ. ապրիլին ԱԺ փակ-գաղտնի նիստում կայացած լսումներից՝ սահմանազատման թեմայով: Թեւանյանը 2023-ից ԱԺ պատգամավոր չէ: Ըստ տեղեկությունների՝ այդ ինֆորմացիան, որն իր մեջ ոչ մի գաղտնիք չի պարունակում, նրան փոխանցել է Արեգնազ Մանուկյանը, որի հետ կապված՝ իշխանական շրջանակներն արդեն քանի օր ակնարկներ են անում:

200 ՀԱԶԱՐ ԴՐԱՄԸ «ՔԹԵՐԻՑ ԵՆ ԲԵՐՈՒՄ»

Արդեն գրել ենք, որ իշխող կուսակցությունը «վարձկանների» միջոցով է քարոզչություն անում՝ բուկլետներ բաժանում, տնետուն շրջում: Նրանք ՔՊ անդամներ չեն, պարզապես վարձու աշխատանք են կատարում: Մեզ պատմեցին, որ ՔՊ աշխատակազմը բուկլետ բաժանող վարձկանների «քթերից է բերում» 200 հազարական դրամները, որոնք վճարում են բուկլետ բաժանող յուրաքանչյուր անձի՝ քարոզչություն անելու, տնետուն այցելելու, ՔՊ-ի չեղած գաղափարախոսությունը պրոպագանդելու համար: Մեզ ասացին, որ աշխատակազմից պահանջել են ոչ միայն Փաշինյանի երեւանյան հանդիպումներում «մասսովկա» ապահովել, այլեւ ասել են՝ գումարի երկրորդ մասն կտան, եթե նորից այցելեն այն բնակարանները, որոնց դռներն առաջին այցի ժամանակ փակ են եղել: Ասել են, որ պետք է հասնել նրան, որ փակ դռներ չլինեն, նաեւ՝ ճշտեն, թե քանի կողմնակից ունի ՔՊ-ն, որ քարոզչության մասին ամբողջական պատկեր ունենան:

ԾՐԱԳԻՐ

«ՈՒԺԵՂ Հայաստան» կուսակցության նախագահ, տնային կալանքի տակ գտնվող Սամվել Կարապետյանը երեկ թիմակիցների հետ հանդիպման ժամանակ հայտարարեց, թե իշխանության գալուց անմիջապես հետո՝ ընդամենը մեկ շաբաթում, ընդունելու են «Սաֆարովի կանխարգելման օրենք»:

ՆԻԿՈԼ ՋԱՆ, ԵԹԵ ՉԵՔ ՈՒԶՈՒՄ, ԴՈՒՔ ՄԻ ԵԿԵՔ ԱՐՑԱԽ, ԲԱՅՑ ՄԵՐՈՆՔ ՊԻՏԻ ԳԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ՝ ԱՊՐԵԼՈՒ

Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

«Մենք առաջարկում ենք, որ Ադրբեջանի քաղաքացիություն ունեցող որեւիցե ֆիզիկական կամ իրավաբանական անձ՝ որպես իրական շահառու, ՀՀ-ում գործունեություն ծավալող, չի կարողանալու ձեռք բերել մեր երկրում որեւէ անշարժ գույք: Մեր Սահմանադրությամբ կա մեխանիզմ՝ հողի նկատմամբ սեփականության իրավունքի սահմանափակման, բայց մենք խոսում ենք ոչ միայն հողի, խոսում ենք նաեւ անշարժ գույք ձեռք բերելու սահմանափակման մասին»,- մանրամասնեց «Ուժեղ Հայաստան» ընտրացուցակի երկրորդ համար, իրավաբան Արամ Վարդեւանյանը՝ հավելելով, որ այդ օրենքն այլ կերպ կոչվելու է ատելության կանխարգելման փաթեթ:

Կուսակցության անդամ, ցուցակի երրորդ համար Գոհար Մելոյանն էլ իր հերթին հավելեց. «Չնայած ստորագրվել են փաստաթղթեր, որոնք ենթադրում էին, որ պետք է Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականությունը երաշխավորվի, ինչը բացառում է այլ պետության զինված ներկայություն, ոչ միայն ադրբեջանական զորքերը չեն հեռացվել այդ տարածքներից, այլեւ օդում կախված է մնացել, այսպես կոչված, անկլավների հարցը»: Կուսակցության առաջնորդ Սամվել Կարապետյանը կրկին պնդեց, որ Հայաստանի համար առաջնային խնդիր է՝ կանգնեցնել «Փաշինյանի եւ Ալիեւի պլանավորած 300 հազար ադրբեջանցիների մուտքը Հայաստան»: Նա կարծում է, որ այս դեպքում իր թիմի «տնտեսական ծրագրերն անիրագործելի» կլինեն, քանի որ «հիմնական աշխատատեղերը բաժին են հասնելու ադրբեջանցիներին»:

Արձանագրենք, որ 300 հազար ադրբեջանցիների հարցը դարձել է Նիկոլ Փաշինյանի եւ իր թիմի «աքիլեսյան գարշապարը»: «Ուժեղ»-ների՝ այդ թեմայով հայտարարություններից հետո ՔՊ-ականները վերեւից ստացած հրահանգով, պատեհ-անպատեհ, անդրադառնում են այդ լուրին ու հերքում այն, խոսում այդ թեմայից անգամ այն ժամանակ, երբ այդ մասին իրենց հարց չեն ուղղել: Բայց իրենք հերքում են, Ադրբեջանն ամեն օր հաստատում է, առաջիկայում էլ Նախիջեւանում «Արեւմտյան Ադրբեջան» վերադարձին նվիրված մեծ համաժողով է լինելու:

Նիկոլ Փաշինյանն էլ օրեր առաջ հերքեց շրջանառվող պնդումները, թե «գործող իշխանության վերընտրվելու դեպքում 300 հազար ադրբեջանցիներ են գալու Հայաստանում ապրելու»: «Ադրբեջանի հետ հարաբերությունների մեր օրակարգում եւ ընդհանրապես մեր միջազգային օրակարգում նման հարց երբեք չի եղել: Այդ մարդիկ այսօր միլիոնավոր դոլարներ են ծախսում, որ այդ օրակարգը ստեղծեն եւ ներմուծեն Հայաստանի Հանրապետության քաղաքական կյանք: Այսպես գործում են միայն օտարերկրյա լրտեսները»,- հայտարարել էր ՔՊ առաջնորդը: Փաշինյանի նախկին թիմակից **Հովիկ Աղազարյանն** առաջիններից էր, որ մեկ տարի առաջ բարձրաձայնել էր 300 հազար ադրբեջանցիների՝ Հայաստանում բնակեցվելու մասին: Երեկ նա չցանկացավ ուղիղ ասել՝ նախկինում Փաշինյանն իրենց հետ փակ նիստերում նման հարց քննարկե՞լ է, թե՝ ոչ, բայց պնդեց, որ կա նման օրակարգ, եւ այդ հարցն օրակարգային է դարձրել անձամբ Փաշինյանը՝ անցած տարվա աշնանը: «Ընդհանրապես կապ չունի՝ այդ հարցը քննարկել ենք մենք, թե ոչ, կամ քննարկել են Փաշինյանն ու Ալիեւը, թե ոչ, այլ կապ ունի այն, որ Ալիեւն անընդհատ ասել է, իսկ ինքը ոչ մի անգամ Ալիեւին չի ասել՝ այ տղա, էս ի՞նչ ես ասում: Իսկ անցած տարեվերջին Փաշինյանը Եվրոպայից դիմեց Ալիեւին՝ առաջարկով, որ մենք մոռանանք արցախցիների վերադարձը, իրենք էլ, այսպես կոչված, Արեւմտյան Ադրբեջանի գաղափարից հրաժարվեն: Այդ առաջարկին Ալիեւը դեռ չի պատասխանել, Աստված չանի՝ եթե ընտրվի, հունիսի 8-ին կզանգի կասի՝ Նիկոլ ջան, էդ ի՞նչ էիր ասում, արի քննարկենք, Նիկոլն էլ կասի՝ դե մենք էլ Արցախ չգնանք, դուք էլ չգաք Հայաստան, բայց նա կասի՝ Նիկոլ ջան, դե գիտես՝ ես քո նման ուժեղ չեմ, չեմ կարող իմ քաղաքացիների դեմն առնել, եթե չեք ուզում, դուք մի եկեք Արցախ, բայց մերոնք պիտի գան Հայաստան եւ ապրեն»,- ասաց Աղազարյանը՝ հավելելով. «Հունիսի 18-19-ին կարծեմ Ալիեւը Նախիջեւանում մեծ միջոցառում է կազմակերպել այն ՀԿ-ների մասնակցությամբ, որոնց ֆինանսավորում է Ադրբեջանի կառավարությունը, «Արեւմտյան Ադրբեջան» ծրագրի հետ կապված քննարկում է լինելու, սա էլ է նշանակում, որ այդ հարցն օրակարգում է»:

Աղազարյանը տեղին համարեց Սամվել Կարապետյանի նախաձեռնությունը, մի վերապահում ունի՝ ոչ թե Սաֆարովի, այլ՝ «Սաֆարովների կանխարգելման օրենք» է պետք. «Շատ լավ նախագիծ է, շատ տեղին, որով պետք է ցույց տալ աշխարհին, որ Ադրբեջանն ու Թուրքիան առաջվա վայրենիները, ցեղասպանները չեն, իրենք նոր՝ ժամանակակից մեթոդներով են ուզում լուծել հայոց պետականության չգոյության հարցը»:

ԱՆԴՐԱՆԻԿ ԹԵՎԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ 3 ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՆ ԱՐԵԼ

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

Մայիսի 23-ին «Մայր Հայաստան» կուսակցության առաջնորդ, ԲՀԿ ընտրացուցակի երկրորդ համար Անդրանիկ Թեւանյանը 2 ամսով կալանավորվեց: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը սիրահոժար տվեց թույլտվությունը՝ հո իզուր չէ՞ Նիկոլ Փաշինյանն իր նախկին լրագրող, նախկին օգնական Վահագն Հովակիմյանին նման բարձր պաշտոն տվել՝ ԿԸՀ նախագահ: Որից հետո իրավապահները գիշերը Անդրանիկ Թեւանյանին ձերբակալեցին ու տեղափոխեցին մեկուսարան: Այս պահին նա ԱԱԾ-ին կից ՔԿՀ-ում է:

Թե ինչ էր քննարկում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մոտ 9 ժամ տեւած նիստի ժամանակ, որից հետո հայտարարեցին, թե բավարարել են դատախազության միջնորդությունն ու «Բարգավաճ Հայաստան» կուսակցության պատգամավորի թեկնածուին զրկել անձեռնմխելիությունից, պարզ չէ: Իսկ դատախազությունը հայտարարեց, որ ԿԸՀ-ն բավարարել է ոչ միայն Թեւանյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու, այլեւ ազատությունից զրկելու վերաբերյալ միջնորդությունը: Թեւանյանը, հիշեցնենք, մեղադրվում է լրտեսության եւ պետական դավաճանության հոդվածներով: Նա մեղքը չի ընդունում, հետապնդումը համարում է քաղաքական՝ միտված ԲՀԿ-ի մասնակցությունն ընտրություններին խոչընդոտելուն:

Քննչականը հայտարարում է, որ Թեւանյանը հավաքագրվել է օտարերկրյա հատուկ ծառայությունների կողմից, եւ երկու տարի առաջ «Ռուսսիա Կովկաս» աշխարհաքաղաքական կենտրոնի տնօրենը, որը, ըստ իրավապահների, օտարերկրյա գործակալ է, 622 հազար դոլարի դիմաց Թեւանյանից ստացել է պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ: Դրանք վերաբերում են 2024 թ. ապրիլին ԱԺ փակ, գաղտնի նիստում կայացած լսումներին, որոնք սահմանազատման թեմայով էին: Ընդդիմության նախաձեռնությամբ հրավիրված այդ նիստին մասնակցել էին արտգործնախարարն ու սահմանազատման հանձնաժողովի նախագահ, փոխվարչապետ Մհեր Գրիգորյանը: Նիստից հետո պատգամավորները հայտարարել էին, որ ոչ մի գաղտնի բան չի խոսվել նիստի ժամանակ: Ձերբակալվելուց առաջ Թեւանյանը հերքել էր իրեն վերագրվող կասկածները, ասել, որ այդ ժամանակ պատգամավոր չի եղել եւ նման կազմակերպության մասին էլ լսած չկա: Բայց իրավապահները չեն բացահայտում, թե 2024-ին Թեւանյանն ում միջոցով ու կոնկրետ ինչ տեղեկություններ է ստացել եւ փոխանցել ռուսական կազմակերպությանը: Մեղադրանքը հաստատվելու դեպքում ընդդիմադիր գործչին սպառնում է 12 տարուց մինչեւ ցմահ ազատազրկում:

Թեւանյանի պաշտպան **Արամ Օրբելյանին** հարցրինք, թե իր պաշտպանյալը քրգործով միա՞ն մեղադրյալն է, կարո՞ղ է մեղադրյալների շրջանակն ընդլայնվել. իշխանական քարոզչիչներից մեկը երեկ գրել էր, որ նիստից տեղեկատվություն հանողն ավելի վտանգավոր հանցագործ է, քան կալանավորվածը: Օրբելյանն ասաց. «Ինձ հայտնի չէ, որ ուրիշ մարդ լինի, բայց չեմ կարող մենաբանել, ընդամենը եղել է 3 գործողություն՝ ձերբակալություն, մեղադրանքի առաջադրում եւ կալանքի միջնորդություն, բացահայտելու հնարավորություն չունեմ, պետական եւ նախաքննական գաղտնիքի լույսի ներքո խիստ կարգավորումների դաշտում ենք»:

- Իսկ ՔԿ-ն նշո՞ւմ է, թե կոնկրետ ինչ տեղեկություններ է փոխանցել:

- Որպեսզի սկսեմ բացատրել, պետք է գործի դետալներ ասեմ Ձեզ, Ձեզ մոտ էլի հարցեր են առաջանալու, ոնց որ այդ հարցերին էլ պետք է պատասխանեմ, դրանց պատասխանեմ, ստացվելու է, որ գործը պատմեցի: Մի բան կարող եմ ասել, որ եւ ՔԿ-ում, եւ կալանքի հարցի քննարկման ժամանակ առնվազն այն նյութերի ծավալը, որը տրվել է, շատ հստակ ասել ենք՝ գործ չկա ստեղ: Իրենք նույնիսկ իրենց մեջ չեն կարողանում հասկանալ՝ ինչում են մեղադրում, պետական գաղտնի՞ք է, թե՞ չէ, փոխանցե՞լ է, չի՞ փոխանցել: Ավել բան չեմ կարող ասել՝ նաեւ պաշտպանական մարտավարությունից ելնելով, լրջագույն խնդիրներ եմ տեսնում՝ այդ գործի հետ կապված: Ամենալրջագույնը ժամանակագրությունն է, հիմա էլի չեմ կարող շատ պարզաբանել, բայց առաջիկայում դրան անդրադարձ կկատարենք, ժամանակագրություն ասելով նկատի ունեմ ընտրություններից 2 շաբաթ առաջ, ըստ էության, ինքը կուսակցության 2-րդ համարն է, դրանով խոչընդոտվում է ֆիզիկապես ընտրարշավին մասնակցությունը, կասկածի տակ է դրվում ընտրությունների արդար ընթացքը:

Մաս I

ԻՇԽԱՆԱԿԱՆ ՔԱՐՈՉՉԱՄԵՔԵՆԱՆ ԿԵՂԾԵԼ Է IRI-Ի ՀԱՂՈՐԴԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Ամերիկյան IRI-ը (International Republican Institute) 1980-ականներին ԱՄՆ կոնգրեսի կողմից ստեղծված կազմակերպություն է, որը, ելնելով համոզմունքից, որ ամերիկյան շահերը լավագույնս պաշտպանված են այնտեղ, որտեղ գոյություն ունեն ազատություն եւ ժողովրդավարություն, ծառայում է աշխարհում ժողովրդավարության տարածմանը: IRI-ը հայտարարում է, որ իրենք «խրախուսում են ժողովրդավարությունն այն վայրերում, որտեղ այն բացակա է, սատարում են ժողովրդավարության ամրապնդմանն այն վայրերում, որտեղ այն վտանգված է, եւ փոխանակում են լավագույն փորձն այն վայրերում, որտեղ ժողովրդավարությունը ծաղկում է» (We encourage democracy in places where it is absent, help democracy become more effective where it is in danger, and share best practices where democracy is flourishing).

IRI-ն այնքան վաղուց է գործում Հայաստանի Հանրապետությունում, որ հազիվ թե մեկը կարողանա վերհիշել, թե երբ է դա սկսվել: Դժվար է նաեւ ասել, թե IRI-ը երբ է համարել, որ Հայաստանում ժողովրդավարությունը ծաղկում է, երբ է համարել, որ վտանգված է: Ամեն պարագայում, այս տարվա ապրիլի վերջին՝ 29.04.2026-ին, IRI-ը հրապարակել էր Հայաստանի 2026թ. խորհրդարանական ընտրություններում IRI-ի Նախընտրական գնահատողական առաքելության Եզրահանգումների եւ առաջարկությունների զեկույցը (Statement of Findings and Recommendations | IRI Pre-Election Assessment Mission to Armenia's 2026 Parliamentary Elections, հասանելի է https://www.iri.org/resources/statement-of-findings-and-recommendations-iri-pre-election-assessment-mission-to-armenias-2026-parliamentary-elections/ հղումով), որի մասին իշխանական քարոզչամեքենան, բնականաբար, լռեց: Այդ զեկույցում տպավորիչ իրազեկությամբ թվարկված էին նախընտրական շրջանում իշխանությունների կողմից գործադրվող ապօրինությունները ընտրություններում: Զեկույցում, օրինակ, առաջարկվում էր, որ ԿԸՀ-ն արձագանքի վարչական ռեսուրսի չարաշահման հանցագործություններին (The CEC and relevant authorities should address offenses related to the misuse of administrative resources), կամ՝ արձանագրված էր, որ ձայներ գնելու ամբաստանությամբ վերջին ձերբակալությունները մեծացրել են քաղաքական լարվածությունը, հարցեր են առաջացնում դրանց գործադրման ժամանակը եւ քաղաքական միջավայրի վրա ազդեցությունը եւ այլն:

Սակայն ամենից կարեւոր եւ ՔՊ-ի համար չարագուշակ իրողությունն այն էր, որ զեկույցում չկար որեւէ կանխատեսում, թե ՔՊ-ն կարող է հաղթել առաջիկա զեկույցում: Ընտրարշավի առնչությամբ գրված էր՝ ՔՊ-ն մնում է առաջատար ուժ, սակայն «Ուժեղ Հայաստանն» ասպարեզ է իջել որպես ամենադինամիկ ընդդիմադիր մրցակից: «Հայաստան» դաշինքը, «Բարգավաճ Հայաստանը» եւ «Հանրապետություն» կուսակցությունը մնում են քաղաքականապես մրցունակ, սակայն մարդաշատ մրցադաշտում ընտրազանգվածները պահպանելու խնդիր ունեն (Civil Contract remains the leading force, while Strong Armenia has emerged as the most dynamic opposition challenger. Armenia Alliance, Prosperous Armenia, and the Republic Party remain politically relevant, but face challenges to retain electoral weight in a crowded field.)

Դիտարկման իրազեկությունն ու խորությունը տպավորություն է գործում եւ ՔՊ-ի համար ոչ թե վարդագույն, առհասարակ՝ ոչ մի հուսադրող հեռանկար չի կանխատեսում: Զեկույցում բաց տեքստով ասվում է, որ նույնիսկ վարչական ռեսուրսի չարաշահմամբ եւ անձանց հետապնդել-ձերբակալելով ՔՊ-ի համար հաղթանակ չի ուրվագծվում: Զեկույցը կազմել են արտերկրից Հայաստան ժամանած IRI-ի կարճաժամկետ Նախընտրական գնահատողական առաքելության (Pre-Election assessment mission, PEAM) անդամները, որոնք Հայաստանում են գտնվել ապրիլի 20-24-ը: PEAM-ի հանգամանքն է բացատրում այդքան ճշմարտացի, իրազեկ եւ ՔՊ-ի համար աննպաստ զեկույցի իրողությունը, որի մասին ՔՊ-ն պետք է լռեր եւ լռել է:

Դրանից հետո՝ 22.05.2026-ին հրապարակվում է Հայաստանի առնչությամբ IRI-ի՝ այս տարվա երրորդ փաստաթուղթը՝ Հանրային կարծիքի հարցախույզ (Public Opinion Survey: Residents of Armenia | May 2026, հասանելի է https://www.iri.org/resources/public-opinion-survey-residents-of-armenia-may-2026/ հղումով), որն անցկացվել է Հայաստանի բնակիչների շրջանում, 2026-ի մայիսի 5-11-ը: Այս հարցախույզն անցկացնողներն այլեւս ամերիկացիները չեն, այլ նրանց հետ համագործակցող՝ Երեւանի Դավիթ Անհաղթի փողոցում գտնվող հայաստանյան մի ընկերություն, որին ծառայություններ պատվիրող իրավաբանական անձանց ցանկում է նաեւ ՀՀ կառավարությունը:

Ամենից տպավորիչ թիվը, որ բացատրում է ամեն ինչ, Նիկոլ Փաշինյանի եւ ՔՊ-ի ապագայի վերաբերյալ հաղորդվում է IRI-ի Հանրային կարծիքի հարցախույզի 2-րդ էջում (հոդվածին կից տեղադրվում է), որից հետո կարելի է նույնիսկ չշարունակել: Հարցախույզին մասնակցելու խնդրանքով հեռախոսազանգերին ՀՀ քաղաքացիների 84%-ը պատասխանել է բացասաբար, հրաժարվել է մասնակցել հարցախույզին: Ընդսմին, ինչպես նույն՝ 2-րդ էջում կարդում ենք, յուրաքանչյուր հեռախոսահամարին կատարվել է մինչեւ երեք զանգ: Այսինքն, ՀՀ քաղաքացիների 84%-ը ոչ թե անհարմար մի պահի զանգ ստանալու կամ տեխնիկական այլ պատճառով չի պատասխանել, այլ հետեւողականորեն եւ որպես դիրքորոշում՝ հրաժարվել է մասնակցել հարցախույզին: Հավանական է, որ հրաժարվողները լինեին գործող իշխանության համակիրները: Գրեթե անհավանական է:

Ինչն էլ ավելի հետաքրքիր է. մնացյալ 16%-ից էլ, ովքեր համաձայնել եւ մասնակցել են հարցախույզին, միայն 32%-ն է ասել, թե կընտրի ՔՊ-ին եւ Փաշինյանին: Իշխանությունը բացահայտ կեղծել էր IRI-ի հրապարակած տվյալը՝ 38% ցուցանիշ թմբկահարելով: Թե ինչ կեղծարարության էին դիմել, ինչ ցուցանիշ էին ինչի փոխարեն ներկայացրել՝ հոդվածի հաջորդ մասում: Այս պահին արձանագրենք, որ IRI-ի հարցախույզին մասնակցելու խնդրանք ստացած ՀՀ քաղաքացիների 16%-ի 32%-ը, այսինքն՝ վերջնահաշվում 5%-ն է միայն հայտնել, թե կընտրի Փաշինյանին եւ ՔՊ-ին: Ընդսմին, այդ 16% հարցախույզին մասնակցած անձինք գրեթե լիովին իշխանության ազդեցության եւ քարոզչական մամլիչի ներքո գտնվող մարդիկ են, ովքեր, դատելով հարցախույզի 59-րդ էջի տվյալներից (հոդվածին կից կայքում տեղադրվում է), հիմնական տեղեկատվություն ստանում են Հ1, «Արմենիա», «Շանթ» հեռուստաընկերություններից:

Մինչդեռ, համաձայն IRI-ի հարցախույզի, նույն՝ 16%-ի 44%-ն ասել է, որ դեռ չի կողմնորոշվել, կամ մերժում է հայտնել, թե ում կընտրի: Այս 44%-ը հենց այն ռեսուրսն է, որ ունի իշխանության ընդդիմադիր մրցակիցը: Իսկ այդ դինամիկ բարձրացող մրցակիցը, ինչպես նշված էր IRI PEAM-ի զեկույցում, «Ուժեղ Հայաստանն» է:



Շարունակելի

Լուսինե ՊԵՏՐՈՍՅԱՆ
lusine@hraparak.am

ՔԿ-Ն ՊԱՏԱՍԽԱՆԵԼ Է՝ ԴԱ «ՎԱՐՉԱՊԵՏԻ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԿԱՐԾԻՔՆ Է», ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՉԷ

44-օրյա պատերազմում զոհված զինծառայողների ծնողների «Որդիների կանչ» հասարակական կազակերպության անդամները մարտի 27-ին բողոքի ակցիա էին կազմակերպել ՀՀ գլխավոր դատախազության շենքի դիմաց: Նրանք հանցագործության մասին հաղորդում էին ներկայացրել դատախազություն՝ կապված այդ օրերին ԱԺ-ում վարչապետ Նիկոլ Փաշինյանի հայտարարության հետ: Նա ԱԺ-ում մասնավորապես հայտարարել էր. «2020-ին գիտակցված զոհողության են գնացել, եւ դրա արդյունքում է, որ ձեռք են բերել պետություն ու անկախություն: Դրանից առաջ բոլոր զոհողությունների հեղինակը մենք չենք եղել, մեզ տարել են կառափնարան եւ զոհել իրենց շահերին: Առաջին անգամ մենք զոհողության ենք գնացել մեր շահերի համար, պետության, մեր ինքնության, մեր ապագայի համար»: Այս խոսքերը զոհվածների ծնողների մոտ մեծ դժգոհություն էին առաջացրել, նրանք հասկացել էին, որ սա խոստովանություն է միտումնավոր՝ «գիտակցված» պատերազմ հրահրելու մասին, որի արդյունքում իրենց զավակները զոհվել են: Նրանք հանցագործության մասին հաղորդում էին պատրաստել, դատախազության շենքի դիմաց նաեւ ստորագրահավաք էին կազմակերպել եւ դիմումը մուտքագրել դատախազություն:

Գլխավոր դատախազությունից այդ ժամանակ մեզ փոխանցել էին, որ համապատասխան կարգով դիմումին ընթացք են տվել: Փաստաբան **Վահան Հովհաննիսյանը**, որը ՀԿ-ի իրավական հարցերով է զբաղվում, «Հրապարակ»-ին ասաց, որ Քննչական կոմիտեն քրեական վարույթ չի նախաձեռնել, դրա վերաբերյալ բողոք են ներկայացրել դատախազին, որը մերժվել է, հիմա էլ պատրաստվում են դիմել դատարան՝ պահանջով, որ դատարանը պարտադրի նախաքննական մարմնին՝ քրեական վարույթ նախաձեռնել. «Պատրաստվում ենք դիմել, ըստ էության, հիմնավոր պատճառաբանություն չի ներկայացվել վարույթ չնախաձեռնելու վերաբերյալ: Եթե չեմ սխալվում, նշել է, թե ինչ որ հայտարարել է, դրանք վարչապետի սուբյեկտիվ կարծիքն են, եւ դա օբյեկտիվ իրականությունը չէ: Սա տարօրինակ է, քանի որ ցանկացած ելույթ ունեցող իր սուբյեկտիվ կարծիքն է հայտնում, հետեւաբար, եթե տարածենք նման դեպքերի վրա, ապա համանման բոլոր դեպքերով պետք է վարույթներ չնախաձեռնվեին, բայց մենք տեսնում ենք, թե ցանկացած հայտարարության դեպքում Քննչական կոմիտեն ինչպիսի արձագանք է տալիս, այս դեպքում գտել է, որ դա ընդամենը սուբյեկտիվ կարծիք է»:

Խոսելով դատարանից ունեցած ակնկալիքների մասին՝ Հովհաննիսյանը նշեց, որ պետք է հնարավոր գործիքակազմն օգտագործել. «Մենք չենք կարող հնարավոր գործիքակազմից չօգտվել, որովհետեւ, եթե հիմա մենք ինչ-որ արդյունք չենք ակնկալում, հետագայում հնարավորություն ունենալու ենք անդրադառնալ էս ամեն ինչին, այդ թվում՝ այն քննիչներին, դատախազներին, ովքեր գտել են, որ վարույթ նախաձեռնելու հիմքեր չկան»:

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

ՀՅԴ

ՈՐԵՎԷ ԲՈՆԱՃՆՇՈՒՄ ՉԻ ԿԱՐՈՂ ԱՆՎԵՐՋ ՊԱՀԵԼ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

«Հրապարակի» զրուցակիցն է «Հայաստան» խմբակցության պատգամավոր **Միեր Մելքոնյանը**:

- «Արեւմտյան Ադրբեջանի» հարցն օրակարգից հանված չէ, չնայած Փաշինյանը հակառակն է պնդում: Բաքվում շարունակում են պատրաստվել հայկական տարածքների «ժողովրդագրական յուրացմանը» եւ 300 հազար փախստականների վերաբնակեցմանը:

- «Արեւմտյան Ադրբեջանի» օրակարգը երբեք էլ դուրս չի եկել Ադրբեջանի ռազմաքաղաքական

ծրագրերից: Անկախ նրանից՝ Փաշինյանն ինչ հայտարարություններ է անում՝ ներքին լսարանին հանգստացնելու համար, Բաքվում շարունակաբար եւ հետեւողականորեն աշխատում են հայկական տարածքների նկատմամբ քաղաքական, տեղեկատվական եւ ժողովրդագրական հավակնությունները խորացնելու ուղղությամբ: Այսօր արդեն բաց տեքստով խոսվում է 300 հազար ադրբեջանցիների վերադարձի մասին, ստեղծվում են կեղծ համայնքներ, մշակվում են քարտեզներ, միջազգային հարթակներում շրջանառվում են վտանգավոր թեզեր: Սա պարզապես քարոզչություն չէ, սա երկարաժամկետ պետական ծրագիր է, որի նպատակը Հայաստանի նկատմամբ նոր պահանջների ձեւավորումն է: Եվ ցավալի իրականությունն այն է, որ հենց այս իշխանությունների օրոք Ադրբեջանն առավել լկտի եւ ագրեսիվ է դարձել: Երբ երկրի ղեկին կանգնած է պարտություններ, զիջումների եւ անընդհատ նահանջների քաղաքականություն վարող արկածախնդիրների խմբակը, բնական է, որ Բաքուն փորձելու է «խաղաղության օրակարգի» անվան տակ հնարավորինս շատ զիջումներ կորզել Փաշինյանից: Ես բազմիցս ասել եմ՝ խաղաղությունը չի կարող կառուցվել միակողմանի զիջումների, ազգային արժանապատվության հաշվին եւ պետական շահերի զոհաբերման միջոցով: Եթե իշխանությունը շարունակի լռել Ադրբեջանի տարածքային եւ ժողովրդագրական նկրտումների վերաբերյալ, ապա վաղն այդ պահանջները դառնալու են Հայաստանի Հանրապետության դեմ նոր ճնշումների եւ նոր սպառնալիքների հիմք: Հայաստանի անվտանգությունը պահանջում է ոչ թե հերթական կապիտուլյացիոն համաձայնություններ, այլ ազգային շահերի հստակ պաշտպանություն, պետական արժանապատվություն եւ ուժեղ բանակցային դիրք:

- Փաշինյանը քարոզարշավի ժամանակ հայտարարում է, որ հայերը երբեք Հայաստանում մեծամասնություն չեն կազմել: Նախկինում Հայաստանում երբեք 90% հայություն չի եղել: Ինչի՞ մասին է խոսում, ի՞նչ է թաքնված նրա այս խոսույթի տակ:

- Վաղուց արդեն Նիկոլ Փաշինյանի ցնորական եւ իրականությունից կտրված հայտարարությունները ոչ միայն զարմանք չեն առաջացնում, այլեւ դարձել են նրա քաղաքական վարքագծի հերթական դրսեւորումը: Երբ երկրի ղեկավարը հայտարարում է, թե հայերը պատմության ընթացքում երբեք Հայաստանում բացարձակ մեծամասնություն չեն կազմել, սա պարզապես պատմական անգրագիտություն չէ, այլ շատ ավելի վտանգավոր քաղաքական խոսույթ է, որի խորքում թաքնված է ազգային ինքնության, պատմական իրավունքի եւ պետական հիմքերի արժեզրկման փորձը: Փաշինյանի ամբողջ գործունեությունը ցույց տվեց, որ ազգային շահն իր համար մշտապես երկրորդական նշանակություն է ունեցել: Նա հետեւողականորեն հարվածի տակ է դրել մեր ազգային արժեհամակարգը, մեր պատմական հիշողությունը, մեր հաղթանակների գաղափարը եւ պետական դիմադրողականությունը: Այս իշխանության օրոք փորձ է արվում հայ ժողովրդի պատմական պայքարը ներկայացնել որպես սխալ, ազգային արժանապատվությունը՝ որպես խոչընդոտ, իսկ հայրենիքի պաշտպանությունը՝ որպես ավելորդ բեռ: Այդ պատճառով էլ պատահական չեն նման հայտարարությունները: Երբ ասում են, թե հայերը երբեք մեծամասնություն չեն եղել Հայաստանում, դրանով հասարակությանը հոգեբանորեն նախապատրաստում են՝ հրաժարվելու ազգային պետության գաղափարից, հաշտվելու հայրենազրկման, արտագաղթի եւ ժողովրդագրական աղետի հետ: Սա պարտվողականության եւ ազգային ինքնության ջլատման քաղաքականություն է: Հայաստանի Հանրապետությունը ստեղծվել է որպես հայ ժողովրդի ազգային պետություն, եւ որեւէ իշխանություն իրավունք չունի կասկածի տակ դնելու այս հիմնարար ճշմարտությունը: Մեր պատմությունը, մեր պայքարը, մեր հազարամյակների ներկայությունն այս հողի վրա որեւէ մեկի քաղաքական շահարկման առարկա չեն կարող դառնալ: Այսօր առավել, քան երբեւէ, անհրաժեշտ է պետականամետ, ազգային մտածողություն ունեցող իշխանություն, որը կվերականգնի ժողովրդի հավատը սեփական ուժերի, սեփական պատմության եւ սեփական պետության հանդեպ:

- Փաշինյանի հրապարակած տեսանյութից անցել է մեկ շաբաթ՝ ոչինչ չի արվել, իսկ նրա հրահանգով իրավապահներն ամենօրյա ռեժիմով խուզարկում են ընդդիմադիր ուժերի ներկայացուցիչներին, նրանց գրասենյակները, ձերբակալում եւ մեղադրանք են առաջադրում: Կարծում եք՝ Փաշինյանը հասկացե՞լ է, որ պարտվում է ընտրություններում, եւ տարբեր քայլերի է դիմում՝ աթոռը պահելու համար:

- Փաշինյանական իշխանության կարեւորագույն եւ անփոփոխ սկզբունքներից մեկը եղել եւ մնում է. «յուրայիններին՝ ամեն ինչ, ընդդիմախոսներին՝ օրենքի ամբողջ խստությունը»: Այս տարիների ընթացքում Հայաստանի քաղաքացիները բազմիցս ականատես են եղել, թե ինչպես է երկրում հաստատվել ընտրովի արդարադատության վտանգավոր համակարգ, որտեղ իրավապահ մարմինները հաճախ գործում են ոչ թե օրենքի, այլ քաղաքական հրահանգների տրամաբանությամբ: Փաշինյանի հրապարակած աղմկահարույց ձայնագրությունից անցել է արդեն մեկ շաբաթ, սակայն մինչ այս պահը հանրությունը չի տեսել ո՛չ օպերատիվ բացահայտումներ, ո՛չ պատասխանատվության ենթարկված անձինք, ո՛չ էլ այն արագությունը, որով նույն իշխանությունները սովորաբար գործում են ընդդիմադիրների նկատմամբ: Բայց երբ խոսքը վերաբերում է ընդդիմադիր գործիչներին, իշխանության քննադատներին կամ քաղաքական անհամաձայնություն հայտնող քաղաքացիներին, նույն իրավապահ համակարգն ակնթարթորեն անցնում է գործողությունների՝ խուզարկություններ, ձերբակալություններ, կալանավորումներ, քաղաքական բնույթի մեղադրանքներ: Սա արդեն վաղուց պատահականություն չէ: Սա համակարգված քաղաքականություն է: Եվ այս վերջին օրերի իրադարձությունները եւս մեկ անգամ ապացուցում են, որ Նիկոլ Փաշինյանը եւ իր իշխանությունը պատրաստ են գնալ ցանկացած քայլի՝ սեփական վերարտադրությունն ապահովելու եւ իշխանությունը պահելու համար: Այն, որ գործող իշխանություններն առաջիկա քաղաքական գործընթացներում փորձելու են կիրառել վարչական ճնշումներ, իրավապահ լծակներ, վախի մթնոլորտ եւ հնարավոր կեղծիքներ, այլեւս կասկած չի հարուցում: Հայաստանի քաղաքացիները տեսել են, թե ինչպես են տարիներ շարունակ լռեցվել ընդդիմախոսները, քաղաքական պատվերներով հարուցվել քրեական գործեր, իսկ իշխանությանը սպասարկող շրջանակները՝ մնացել անպատիժ: Սակայն պետք է հստակ արձանագրել՝ որեւէ բռնաճնշում չի կարող անվերջ պահել իշխանությունը: Ժողովրդի վստահությունը կորցրած իշխանությունը որքան ավելի է դիմում ուժային մեթոդների, այնքան ավելի է ապացուցում սեփական քաղաքական պարտությունը: Իսկ այսօր ակնհայտ է, որ Փաշինյանը շատ լավ հասկանում է՝ հասարակության ներսում դժգոհությունը խորանում է, եւ քաղաքական աջակցությունն օրեցօր նվազում է: Այդ պատճառով էլ իշխանությունն անցնում է ինքնապահպանման ռեժիմի, օգտագործելով պետական ամբողջ ապարատը՝ սեփական աթոռը պահելու համար:

- Երեւանում կայացած գագաթնաժողովի ընթացքում Հայաստանն ու Թուրքիան ստորագրել են պատմական Անիի կամրջի՝ Հայաստանի եւ Թուրքիայի սահմանին գտնվող պատմական Մետաքսի ճանապարհի այդ հատվածի համատեղ վերականգնման արձանագրություն: Ի՞նչ կտա դա Հայաստանին եւ սահմանի բացումը: Մի՞թե հայերը կարող են ցեղասպանություն գործած ազգի հետ բարեկամություն անել:

- Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորումը կարող է բխել Հայաստանի Հանրապետության երկարաժամկետ շահերից, եթե այդ գործընթացը կառուցված լինի փոխադարձ հարգանքի, ինքնիշխանության եւ պետական շահերի պաշտպանության վրա: Հայաստանը չի կարող մշտապես մնալ փակ սահմանների եւ տարածաշրջանային մեկուսացման պայմաններում: Սահմանների բացումը կարող է ստեղծել տնտեսական, տրանսպորտային եւ տարածաշրջանային նոր հնարավորություններ: Այստեղ կա մի շատ կարեւոր «բայց». նորմալ հարաբերություններ կառուցելը չի նշանակում հրաժարվել մեր պատմական հիշողությունից, մոռանալ Հայոց ցեղասպանությունը կամ ոտնատակ տալ մեր ազգային շահերը: Որեւէ իշխանություն իրավունք չունի հանուն «խաղաղության դարաշրջանի» ջնջել ժողովրդի պատմական հիշողությունը կամ լռեցնել ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը: Մենք կարող ենք հարաբերություններ կառուցել Թուրքիայի հետ, բայց միայն՝ արժանապատիվ եւ փոխադարձ հարգանքի հիման վրա: Այո, սահմանները պետք է բացվեն, բայց նախեւառաջ պետությունը պարտավոր է հստակ հաշվարկել բոլոր ռիսկերը եւ պաշտպանել հայ տնտեսվարողի շահերը: Եթե վաղը թուրքական էժան եւ պետական աջակցությամբ ապրանքները հեղեղեն հայկական շուկան, առանց որեւէ պաշտպանական մեխանիզմի, առաջինը տուժելու են հենց հայ արտադրողը, գյուղացին, փոքր եւ միջին բիզնեսը: Այս իշխանությունները մինչ օրս որեւէ հստակ տնտեսական ռազմավարություն չեն ներկայացրել, թե սահմանի բացումից հետո ինչպես են պաշտպանելու մեր ներքին շուկան եւ ազգային տնտեսությունը: Ինչ վերաբերում է Անիի կամրջի վերականգնման մասին արձանագրությանը, ապա, իմ կարծիքով, դա ավելի շատ ցուցադրական եւ խորհրդանշական ժեստ է, քան իրական բովանդակային առաջընթաց: Թուրքական կողմն ու Հայաստանի այսօրվա իշխանությունները փորձում են միջազգային հանրությանը ցույց տալ, թե իբր հարաբերություններում դրական դինամիկա կա: Բայց իրական առաջընթացը չափվում է ոչ թե գեղեցիկ լուսանկարներով ու խորհրդանշական ծրագրերով, այլ՝ կոնկրետ քաղաքականությամբ, հավասար պայմաններով եւ ազգային շահերի պաշտպանությամբ: Հայաստանը պետք է գնա հարաբերությունների կարգավորման, բայց ոչ երբեք սեփական ինքնության, պատմության եւ պետական շահերի հաշվին:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԹԵՄԱ ԱՄՍԻՆ

ՄԵԿԻ ՓՈԽԱՐԵՆ ՄԻ ՔԱՆԻ ՏԱՍՆՅԱԿ ԱԱԾ ԵՎ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵ ՍՏԵՂԾԵՔ

Հաշվե՞լ եք, թե Հայաստանում ամեն օր քանի մարդ է ձերբակալվում եւ կալանավորվում, ոչ թե քրեական մեղադրանքներով, այլ՝ քաղաքական, ոչ թե ինչ-որ հանցագործություն կատարելու համար, այլ՝ իր քաղաքական գործունեության համար, միայն այն բանի համար, որ ընդդիմադիր այս կամ այն կուսակցության համակիրն ու աջակիցն է: Մտեք, այսպես կոչված, Հակակոռուպցիոն կոմիտեի ֆեյսբուքյան էջ եւ սահմռկեցուցիչ պատկերի ականատես կլինեք: Կարելի էր մաթեմատիկական պարզ հաշվարկ անել՝ գումարելով այս կոմիտեի կողմից ձերբակալվածների թվերը եւ ստանալ միասնական պատկեր, բայց դա անհնար է, որովհետեւ ձերբակալված անձանց ոչ միայն անհատական տվյալները, այլեւ նույնիսկ թիվը թաքցվում է: Չեն հրապարակում, որ մարդիկ չտեսնեն, թե ինչ ավերածություն է իրականացվում երկրում ամեն օր: Մի կոմիտե, որի անունը հուշում է, որ պետք է զբաղված լիներ կոռուպցիայի դեմ պայքարով, իսկ կոռուպցիան հնարավոր է միայն իշխանություն ունեցողների շրջապատում, զբաղված է իշխանության քաղաքական հակառակորդների դեմ տոտալ հալածանքներ կազմակերպելով, իսկական քաղաքական կոռուպցիան հենց սա է, երբ մարդ վճարվում է ոչ իր պաշտոնական պարտականությունների կատարման համար:

Ահա՝ այս կոմիտեի շարքային հաղորդագրություններից մեկը, մեկը նրանցից, որ ամեն օր ու օրը մի քանի անգամ տարածում են. «ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից իրականացված միջոցառումների հիման վրա Հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնված վարույթով փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ «Ուժեղ Հայաստան» կուսակցության համակիրը նույն կուսակցության Շիրակի մարզի Անի համայնքի պատասխանատուի եւ այլ անձանց հետ Ազգային ժողովի ընտրություններին իրենց կուսակցության օգտին քվեարկելու պայմանով մի շարք ընտրողների տվել է 70-200 հազար ՀՀ դրամի չափով ընտրակաշառք»: Սա շատ ստանդարտ գործելակերպ է. ԱԱԾ-ն գաղտնալսում է ընդդիմության ակտիվիստներին, հետո այդ գաղտնալսումները ձեւակերպում են իբրեւ թե ընտրակաշառք տալու եւ ստանալու ապացույց եւ դրա հիման վրա մարդկանց նախ ձերբակալում են, հետո՝ կալանավորում:

Ահա թե ինչպես են հիմնավորում մարդկանց կալանքը. «Խմբի անդամներն իրենց հանցավոր գործունեությանն օրինական տեսք հաղորդելու նպատակով ընտրակաշառք ստացող անձանց փաստաթղթավորել են որպես նախընտրական ակտիվիստներ, կամավորներ եւ տարածքային պատասխանատուներ՝ նրանց վճարելով ոչ թե փաստացի կատարված աշխատանքի, այլ ընտրություններին նախապես պայմանավորված ձեւով քվեարկելու խոստման դիմաց: Դեպքի առթիվ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ, ձերբակալվել են մի շարք անձինք»: Ինչպես տեսնում եք, ձերբակալված անձանց քանակը նշված չէ, թե այդ մի շարքում քանի մարդ է, հայտնի չէ: Սա մայիսի 22-ի հաղորդագրություն է: Նույն օրը կոմիտեն ձերբակալություններ է արել ԲՀԿ Տավուշի մարզային կառույցում, Գյումրիում: Հենց այդ օրը ձերբակալվել է «Մայր Հայաստան» կուսակցության նախագահ Անդրանիկ Թեւանյանը, բայց դա արդեն՝ ԱԱԾ-ի կողմից: Մեկ օրում հաստատ 10-ից ավելի մարդ է ձերբակալվել ու կալանավորվել, մի սովորական շարքային օրում 10 կամ գուցե 20 անմեղ մարդ դարձել է քաղաքական հետապնդման զոհ:

Բայց սահմռկեցուցիչն այլ բան է. այս մեղադրանքներով կարող են կալանավորել ընդդիմության ցանկացած ներկայացուցչի, ընդդիմադիր կուսակցությունների նախընտրական շտաբների ցանկացած անդամի: Ասում են՝ մարդկանց փաստաթղթավորել են որպես ակտիվիստի կամ տարածքային պատասխանատուի, բայց նրանք գումար են ստացել ընտրություններին պայմանավորված ձեւով քվեարկելու համար: Ըստ Հակակոռուպցիոն կոմիտեի եւ նրա փաստացի ղեկավար Նիկոլ Փաշինյանի, ընդդիմադիր կուսակցության նախընտրական շտաբի պատասխանատուն պետք է քվեարկի ՔՊ-ի օգտին: Եթե մարդուն գաղտնալսում են, իսկ նա հեռախոսային զրույցի ժամանակ ասում է, որ ես ընտրելու եմ «Ուժեղ Հայաստանի» կամ «Բարգավաճ Հայաստանի» օգտին, դա միանգամից համարվում է հանցանքն ապացուցող փաստ, եւ մարդուն կալանավորում են, դե որովհետեւ նա, որպես շտաբի աշխատակից, գումար է ստանում եւ պատրաստվում է քվեարկել այդ կուսակցության օգտին. միթե ավելի մեծ հանցանք կարելի է պատկերացնել: Իսկ քանի դեռ ընտրություններին մասնակցող ընդդիմադիր ուժերի նախընտրական շտաբների ներկայացուցիչները պատրաստվում են քվեարկել ընդդիմադիր ուժերի օգտին, նրանց՝ բոլորին, կարելի է հռչակել հանցագործներ եւ ձերբակալել:

Որքան քվեարկության օրը մոտենա, ձերբակալությունները կդառնան ավելի հաճախակի եւ ավելի ինտենսիվ, որ հասցնեն մինչեւ ընտրությունների օրը բոլոր պատասխանատուներին եւ ակտիվիստներին ձերբակալած լինեն: «Ուժեղ Հայաստան» կուսակցության պատգամավորի թեկնածու Գոհար Մելոյանը մի 10 օր առաջ հայտարարեց, որ արդեն կալանավորել են իրենց կուսակցության ավելի քան 300 ակտիվիստի: Հիմա այդ թիվն անհամեմատ ավելի մեծ կլինի՝ գուցե 500 մարդ: Սա՝ միայն «Ուժեղ Հայաստանի» դեպքում, գրեթե նույն ինտենսիվությամբ ու նույն մեղադրանքներով կալանավորում են ԲՀԿ-ի եւ «Հայաստան» դաշինքի նախընտրական շտաբների ներկայացուցիչների: Ձերբակալվածների թիվը հաստատ անցած կլինի հազարը: Հակակոռուպցիոն կոմիտեն ձերբակալվածների հստակ թիվ չի գրում, որ չերեւա, թե ինչքան շատ մարդ է ձերբակալել, որ երկրում գրեթե բոլորը հանցագործ են, ուղղակի մի մասին դեռ չեն ձերբակալել, հերթի մեջ են:

Նիկոլ Փաշինյանի տրամաբանությամբ, Հայաստանը լցված է հանցագործներով, ընդդիմության բոլոր ակտիվիստները եւ համախոհները հանցագործներ են՝ կամ ընտրակաշառք են բաժանում, կամ ընտրակաշառք ստանում: Միակ ազնիվն ու արդարն ինքն ու իր թիմակիցներն են, միայն իրենք իրավունք ունեն մնալ ազատության մեջ, որ կարողանան մրցակցության իսպառ բացակայության պայմաններում հերթական անգամ բռնազավթել իշխանությունը: Այո, եթե Նիկոլ Փաշինյանին հաջողվի մինչեւ քվեարկության օրը 400-600 հազար մարդու ձերբակալել, գուցեեւ հաջողություն ունենան, բայց դրա համար եղած ուժերը բավարար չեն. գոյություն ունեցողին զուգահեռ, մի քանի տասնյակ Հակակոռուպցիոն կոմիտե է պետք ստեղծել, մի քանի տասնյակ Քննչական կոմիտե, մի քանի տասնյակ էլ՝ ԱԱԾ: Ընդ որում, եղածների կադրային բազան մեծացնելն արդյունավետ չի լինի, պետք է մի քանի տասնյակ առանձին կառույցներ, որ սրանք իրար մեջ մրցակցեն, թե ով ավելի շատ մարդ ձերբակալեց: Բոլոր պետական կառույցները կարելի է լուծարել եւ դրանց փոխարեն ստեղծել ԱԱԾ-ներ եւ Հակակոռուպցիոն կոմիտեներ՝ ամենաարդյունավետ աշխատող մարմինները գոյություն ունեցողների մեջ:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԻՐԱՎԻՃԱԿԸ ԴԻՏԱՎՈՐՅԱԼ ԵՆ ՍՐՈՒՄ

«Հրապարակի» զրուցակիցը Հայաստանի շնորհապետական կուսակցության 2-րդ համար **Էդվարդ Անտինյանն** է:

- Նախընտրական քարոզարշավների ժամանակ Նիկոլ Փաշինյանը սպառնալիքներ է հղում, ասում է, որ ընդդիմադիրներին «սատկացնելու» է, «կզըցնելու» է, ունեզրկելու է, մարդկանց ընտանիքներ է ներխուժում, նրանց երեխաներին «լակոտ» անվանում: Որպես քաղաքական հայտ ներկայացրած ուժի ներկայացուցիչ՝ ի՞նչ գնահատական կտաք այս հայտարարություններին:

- Տեղից էլ այս ընտրությունները շատ լարված են լինելու: Ռուս-ուկրաինական պատերազմով պայմանավորված՝ աշխարհի բոլոր ընտրություններում, անկախ այն բանից, թե եվրոպական երկիր է կամ այլ տարածքում գտնվող պետություն, ուշադրություն է դարձվում, թե ինչպիսի աշխարհաքաղաքական կողմնորոշում ունի այս կամ պետությունը: Հայաստանում եւս դա հստակ է: 2021 թվականի ընտրություններից շեշտակի տարբերվում է 2026-ի ընտրությունը, ինչու՝ որովհետեւ այս ընտրություններին կա շատ մեծ ազդեցություն դրսից: Հայաստանում կան ուժեր, որոնք բացահայտ օգտվում են արտաքին ուժերի աջակցությունից, իսկ դա լարվածությունն ավելի ու ավելի է մեծացնում: Նիկոլ Փաշինյանի խոսույթին նոր չէ, որ մենք ծանոթանում ենք, սակայն նա այս փուլում հերիք չէ նման հայտարարություններ է անում, այլեւ իրավիճակը դիտավորյալ ավելի է սրում: Եթե դու հայտարարում ես, որ ընտրություններից հետո ուժ ես գործադրելու եւ մարդուց անգամ իր տունն ես վերցնելու, դա չի ասվում այն բանի համար, որ Փաշինյանն իսկապես ուզում է արդարությունը վերականգնել, բնավ: Նիկոլ Փաշինյանն արդեն 8 տարի եւ ավելի իշխանության է եւ եթե իսկապես ցանկանար արդարությունը վերականգնել, ապա վաղուց քայլեր կձեռնարկեր: Նիկոլ Փաշինյանն ուղղակի ընտրություններին ընդառաջ սպառնում է, ասում է՝ այ, դու էս բանը կանես ու կստանաս…. դրանից մեծանում է լարվածությունը: Փաշինյանն ասում է, որ եթե ինքը չհաղթի ընտրություններում, պատերազմ տեղի կունենա, ընդդիմադիրներն էլ ասում են, որ եթե իրենք չհաղթեն, ռուսները ճանապարհը կփակեն, օդը կփակեն, էս կանեն, էն կանեն: Երկու կողմից էլ կենաց-մահու կռիվ է գնում: Ի դեպ, այնպես չէ, որ ընդդիմությունն իրավիճակը սրելուն դեմ է: Այս ամենն առաջացնում է առանձնահատուկ դժվարություն, եւ ես այն կարծիքին եմ, որ հիմա ամեն բան արվում է, որպեսզի ընտրություններից հետո, եթե դրանց արդյունքները չգոհացնեն, արդյունքները չեն ճանաչելու….

- Փաշինյանն այնքան է կորցրել հավասարակշռությունը, որ անգամ մի կնոջ քաշքշեց փողոցի մեջտեղում:

- Առհասարակ, եթե այդ պրոցեսը կապ չունենար քաղաքականության, ընտրությունների հետ, միանշանակ, ես դրան բացասական էի վերաբերվելու: Բայց իրավիճակը շատ ավելի բարդ է այսօր, քան էթիկայի նորմեր պահելը: Պետությանը նախապատրաստում են հետընտրական բախումների՝ իրավիճակը դիտավորյալ սրելով: Եթե ընտրության արդյունքը Նիկոլ Փաշինյանի համար գոհացուցիչ չլինի, ապա նա ժողովրդին փողոց կհանի, իսկ եթե ընտրությունների արդյունքները գոհացուցիչ չլինեն ռուսամետ ուժերի համար, նրանք եւս ունեն բավարար ռեսուրսներ՝ մարդկանց փողոց հանելու: Այս ամենի դեմն առնելու մեկ ձեւ կա: Այս երկու ուժերից եւ ոչ մեկը չպետք է 50 պլյուս ձայն ստանա: Բավական է, որ նրանցից մեկը ստանա 50 պլյուս, եւ լարվածությունն ավելի է մեծանալու: Մի կողմն ասում է, որ խաղաղություն է բերել Ալիեւի շնորհիվ, ասում է, որ խաղաղությունը պետք է փոխշահավետ լինի, ես դրանից ավելի աբսուրդ բան իմ կյանքում չեմ լսել: Ի՞նչ է նշանակում փոխշահավետ խաղաղություն: Ո՞վ ասաց, որ եթե դու ինչ-որ մեկի հետ առեւտուր ես սկսել, ապա նա քո պետությունը չի ցանկանալու վերցնել քո ձեռքից: Նիկոլ Փաշինյանի հայտարարությունները վկայում են, որ խաղաղությունը կառուցված է Ադրբեջանի ցանկության վրա: Եթե Ադրբեջանն ուզի խաղաղություն, ապա կլինի, չցանկանա՝ չի լինի: Շատ կարեւոր է, որ մենք այս ամենի գործիքը չդառնանք եւ Հայաստանը չտանենք բախման: Ընդդիմադիր ուժերն էլ վստահ են, որ ռուսների օգնությամբ բախումներ կլինեն, եւ իրենք իշխանություն կվերցնեն այդ ճանապարհով: Իշխանությունն ունի վարչական մեծ ռեսուրսներ, գումարներ, ընդդիմությունը եւս ունի մեծ ռեսուրսներ, եւ այդ ամենը մեր պետությունը տանելու է բախման, ինչից պետք է զերծ մնալ:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԵԹԵ ԿԶԱՑՆԵԼՈՒ ԱՐՎԵՍՏԻՆ ՏԻՐԱՊԵՏՈՒՄ ԵՔ, ԱՊԱ ԿԶԱՑՐԵՔ ԱԴՐԲԵՋԱՆՑԻՆԵՐԻՆ

*«Հրապարակի» զրուցակիցն է Սյունիքի մարզից «Միասնության թեւեր» կուսակցության պատգամավորի թեկնածու **Կարեն Լազարյանը**:*

- Google map-ում արդեն Տիգրանաշենի անունը փոխված է՝ տարածքը գրված է՝ Ադրբեջան, իսկ Տիգրանաշենը՝ Քյարքի: Ինչ նշանակություն ունի այս ճանապարհը, եւ արդյոք Տիգրանաշենը հանձնելուց հետո Սյունիքը շրջափակման մեջ չի հայտնվի:

- Տեղյակ եմ տագնապահարույց այդ տեղեկատվությանը: Միայն առաջին հայացքից է թվում, թե խոսքը հերթական անգամ մեր տարածքի մի կտորը՝ փաթեթավորված «անկլավ» հորինվածքի մեջ, նվիրում ենք Ադրբեջանին, բայց... խորքում խոսքը Սյունիքը եւ Վայոց ձորը հանրապետության կենտրոնից կտրելու եւ շրջափակման մեջ ներքաշելու մասին է՝ դրանից բխող բոլոր հետեւանքներով: Ու թե ինչ կարող է կատարվել շրջափակման մեջ հայտնվելիք Սյունիքի հետ, կարող ենք պատկերացնել այն ամենը հիշելով, ինչը տեղի ունեցավ Արցախի հետ 2022-23 թվականներին: Մի խոսքով՝ Տիգրանաշենի հանձնումը գործող վարչախմբի հակայունիքյան հերթական քայլը կլինի: Մեծագույն անհեթեթություն է Տիգրանաշենն անկլավ համարելը: Օրվա իշխանությունն իսկապե՞ս տեղյակ չէ՝ ինչպես է այդ բնակավայրը հայտնվել չէ: Մյուս կողմից՝ Ադրբեջանը չի էլ թաքցնում այդկերպ Հայաստանը ներսից զավթելու նկրտումները: Դուք հարցնում եք Նախիջեւանում կազմակերպվելիք «Վերադարձ Արեւմտյան Ադրբեջան» 3-րդ փառատոնի մասին: Բայց մի՞թե դա առաջին միջոցառումն է՝ «Արեւմտյան Ադրբեջան» նախագծի շրջանակում: Մի՞թե չեք նկատում Ադրբեջանի բարձրագույն իշխանության ներկայացուցիչների անթաքույց աջակցությունը Հայաստանի դեմ «թավշյա ագրեսիա» ձեռնարկելու այդ նախագծին: Ասելու, խոսելու, քննադատելու եւ հայհոյելու ժամանակները վաղուց անցել են: Հիմա հակահայկական այդ ծրագրին կոնկրետ գործերով՝ ազգովի դիմակայելու ժամանակն է: Իշխանությունը գլխավորող անձինք գոնե գիտակցո՞ւմ են, թե ինչ կկատարվի, օրինակ, Սյունիքի հետ, եթե «Արեւմտյան Ադրբեջան» նախագիծը կյանքի կոչվի:

- Ի՞նչ գնահատական կտաք Փաշինյանի խոսույթին՝ կզացնելու եմ, սատկացնելու եմ: Կամ՝ արցախցուն ասում է. ինչո՞ւ չես զոհվել: Ինչո՞ւ է այդպես ագրեսիվ դարձել:

- Ինչո՞ւ է այդպես ագրեսիվ դարձել. քարոզարշավը հավելյալ անգամ ցույց է տալիս, որ ինքը՝ իր գլխավորած քաղաքական ուժի հետ փոխարեն շարքային հայ մարդիկ են վիրավորվում, երբ Ադրբեջանից իրենց երկրի վարչապետի հասցեին վիրավորական, հայհոյախառն արտահայտություններ են հնչեցնում, երբ համացանցում իր խոսույթին համարժեք տեքստերով երգեր են հնչեցնում Հայաստանի վարչապետի մասին: Դե նրանց կզացրու: Ավելին ասեմ՝ հազարավոր ոստիկաններով շրջապատված մեկի համար այնքան էլ դժվար չէ շարքային, անպաշտպան մարդկանց սպառնալը: Շատ ափսոս, որ իմ երկրի ղեկավարն այդքան իջել է: Արցախցուն ասում է՝ ինչո՞ւ չես զոհվել: Մի՞թե քիչ են զոհվել: Հազարամյա պապենական օջախներ են կորցրել, սրբավայրեր, հարազատի ու մերձավորի գերեզման, շրջափակում են տեսել: Առհասարակ՝ հայի հերոսական տեսակին, հայի արժանապատվությունն իսկապես կրող այդ տեսակին վատաբանելն ու մեզնից օտարելը, պիտակավորելը, զրպարտելը սրբապղծության պես մի բան է: Ավելին ասեմ՝ արցախահայության հերոսական գործողությունները, որ դրսեւորվել են 1990-ականների, 2020-ի եւ 2023-ի պատերազմներում, արդեն իսկ տեղ են գտել մեր պատմության փառքի էջերում՝ Ավարայրի, Սարդարապատի մասին պատմող նյութերի կողքին:

- Եթե ՔՊ-ն վերընտրվի, ի՞նչ է սպասվում Սյունիքին: Սահմանազատում կիրականացվի՞, ադրբեջանցի զինվորները դուրս կգա՞ն Հայաստանի սուվերեն տարածքից:

- Սյունիքը, ցավոք, 2020-ից հետո մի քանի անգամ արդեն անդամահատվել է: Եվ հիմա մեր իշխանավորներից որեւէ մեկը չգիտի անգամ, թե 4506 քառակուսի կմ Սյունիքի տարածքից որքան է մնացել Հայաստանի ինքնիշխանության ներքո: Այդուհանդերձ, Սյունիքին ուղղված սպառնալիքները ոչ միայն չեն դադարում, այլեւ սաստկանում են: Թե ինչ կկատարվի Սյունիքի հետ ՔՊ-ի վերարտադրության դեպքում, մասամբ քննարկեցինք. Սյունիքը կդառնա «Արեւմտյան Ադրբեջան» սատանայական ծրագրի առաջին թիրախը, Տիգրանաշենը նվիրելով թուրքին՝ Սյունիքը կհայտնվի շրջափակման մեջ՝ դրանից բխող անվտանգային ու ժողովրդագրական լրջագույն խնդիրներով: Իսկ սահմանազատում-սահմանագծումը, որը Ձեզ մտահոգում է, Սյունիքի պարագայում մի պատասխան ունի՝ այստեղ վերջին հարյուր տարում երկու անգամ արդեն սահմանազատում-սահմանագծում է կատարվել՝ 1920-ականներին եւ 1980-ականներին: Նրանք, ովքեր փորձում են Սյունիքի ճշգրտված սահմանները երրորդ անգամ ճշգրտել, ուրեմն անազնիվ նպատակ են հետապնդում: Ուստի պետք է բացառել Սյունիքում սահմանազատման-սահմանագծման ուղղությամբ որեւէ քայլ: Իսկ այն թեզը, թե Սյունիք ներխուժած ագրեսորը դուրս է գալու օկուպացված մեր տարածքներից, սովորական խաբկանք է, որեւէ հիմք չունեցող զրույց: Բա ասում են՝ Ալմա-Աթայի հռչակագիր... Գործող իշխանությունների ջանքերով վիճելի դարձած սյունիքյան հազարավոր հեկտար հողատարածքներ նույն Ալմա-Աթայի հռչակագրի ընդունման ժամանակ Սյունիքի մարզի մաս էին կազմում: Հետո տեսանք, թե ինչ եղավ: Մեր օկուպացված տարածքներն ազատագրելու այլ կոնցեպցիա պետք է առաջադրել, գործող իշխանությունը 5 տարվա ընթացքում որեւէ քայլ չի կատարել այդ ուղղությամբ եւ նախընտրական քարոզի այս օրերին անգամ խուսափում է կոնկրետ պատասխան տալ՝ ինչպե՞ս ենք ազատագրելու Ադրբեջանի կողմից օկուպացված սյունիքյան տարածքները:

- Ալիեւը բաց տեքստով խոսում է 300 հազար ադրբեջանցիների վերադարձի մասին, Նիկոլ Փաշինյանը ձայն չկորցնելու համար հերքում է: Հավատա՞նք:

- Արդեն քննարկեցինք այն հետեւանքները, որ կարող է ունենալ Սյունիքը 300 հազար ադրբեջանցու «վերադարձի» ծրագրի իրականացման դեպքում: Ալիեւն ասում է, Փաշինյանը՝ հերքում... Նախորդ տարիների դառը փորձը ցույց է տալիս, որ Փաշինյանը գործնականում չի կարող հերքել, ընդդիմանալ Իլհամ Ալիեւին: «Վերադարձի» ծրագիրը, Տիգրանաշենի հորինված խնդիրը, Սահմանադրությունը փոխելու Ալիեւի պահանջը, «Զանգեզուրի միջանցք» հակայունիքյան նախագիծը հավելյալ ապացույց են այն բանի, որ խաղաղության մասին թմբկահարվող խոսույթը մեծ սուտ է եւ պատրանք: Այդպիսի խաղաղություն չի լինում, խաղաղություն կամեցող երկիրը մյուս կողմին 5-6 տարի շարունակ ծնկաչոքք վիճակ չի պարտադրում եւ, օգտվելով նրա վիճակից, անընդհատ պահանջներ չի ներկայացնում: Ու որպեսզի դիմակայենք «խաղաղության» կարգախոսով անվերջ զիջումների եւ ուրացման քաղաքականությանը, պետք է հունիսի 7-ին «ոչ» ասենք Նիկոլ Փաշինյանի գլխավորած կուսակցությանը: Որքան մոտենում է հունիսի 7-ը, այնքան ավելի ակնհայտ է դառնում՝ այդ ընտրությամբ վճռվելու է հայոց անկախ, ինքնիշխան, արժանապատիվ պետության հետագա ընթացքը, վճռվելու է Սյունիքի ճակատագիրը:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԵՆՍԸ ՍԿՍԵԼ Է «ՉՏԵՂԱՎՈՐՎԵԼ» ԹՐԱՄՓԻ ՈՒՂԵՐՈՒՄ

ԱՄՆ փոխնախագահ Ջեյ Դի Վենսը հնարավոր է հրաժարվի 2028 թ. նախագահական ընտրություններին մասնակցելուց: Նա այդ տարբերակը սկսել է դիտարկել այն բանից հետո, երբ Ազգային հետախուզության ղեկավար Թուլսի Գաբարդը հրաժարական է տվել՝ հայտնում է The Daily Mail պարբերականը: Համաձայն հոդվածի, Գաբարդը Վենսի փոքրաթիվ դաշնակիցներից էր՝ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի ռազմական հավակնությունների զսպման հարցում: Վենսը «փափուկ արտաքին քաղաքականության» կողմնակից է ու դրանով հակասություն ունի ներկայիս նախագահ Թրամփի հետ: Գաբարդի հեռանալով՝ Վենսի դիրքերը թուլացել են, եւ առիթից օգտվելով՝ պետքարտուղար Մարկո Ռուբիոն է դարձել նախագահ Թրամփի թիմում արտաքին քաղաքական հարցերով հիմնական դերակատարը: Նախագահ Թրամփի համար Ռուբիոյի հեղինակությունն ավելին է, քան Վենսինը, եւ նա լսում է Ռուբիոյին: «Վենսն այդ ամենին չի ինտեգրվում, եւ դա վաղուց էր հասկանալի»,- ասված է հոդվածում: Նաեւ ասվում է, որ եթե Վենսը հրաժարվի առաջիկա նախագահական ընտրություններից, ապա դա կհամարվի տակտիկական քայլ, որով նա չի վերցնի այն ամենի պատասխանատվությունը, որը վերջին երկու տարում է արվել՝ որպես Թրամփի «քաղաքական ժառանգության» հնարավոր իրավահաջորդ: Միաժամանակ, եթե, ամեն դեպքում, Վենսն ուզենա մի օր առաջադրվել որպես ԱՄՆ նախագահ, ապա, օրինակ, 2032 եւ 36 թվականների նախագահական ընտրությունների տեսլականում պետք է կարողանա առնվազն 10 տարի պահպանել իր քաղաքական կշիռը:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հարցազրույց ռեժիսոր, հասարակական գործիչ ***Հովհաննես Իշխանյանի*** *հետ*

ԻՆՔԸ ԿԱՐՈՂ Է ՍԱՏԿԱՑՆԵԼ-ՄԱՏԿԱՑՆԵԼՈՎ ԽՈՍԵԼ, ԲԱՅՑ ԻՐ ԴԵՄ ԳՐԱՌՈՒՄ ԱՆԵԼ ՉԻ ԿԱՐԵԼԻ

- Փաշինյանի նախընտրական հիստերիաները վախի՞ հետեւանք են, ինքնակառավարումը կորցնելո՞ւ, թե՞ ցինիզմ են:

- Նախ՝ արդեն աբսուրդ է, որ մենք ընտրության ենք գնում մեկի հետ, որն Արցախը հանձնել է, դավաճանել է բոլորիս, էլ չեմ ասում մնացածը: Ինքը մեզ խաբելով տարել է պատերազմ՝ խաղալով մեր հույզերի վրա, թե գնում ենք մեր հայրենիքն ու մեր ընտանիքը պաշտպանելու, բայց, փաստորեն, խաբում էր, որ մեզ սպանի եւ դրա հիման վրա Արցախը հանձնի: Այդքանից հետո ընտրություններ է կազմակերպում եւ ֆռֆռում է քաղաքում, խոսում է, մուննաթ է գալիս եւ այն: Սա հարցի ազգային կողմն է, իսկ մարդկային տեսակետից ինքը ռասիստ է: Այն սովորական ռասիստը, որի համար Երկրորդ աշխարհամարտից հետո մարդիկ հավաքվեցին եւ ասացին՝ պիտի մի բան անենք, որ այդպես էլ չլինի, եւ ստեղծեցին ՄԱԿ-ը: Որոշեցին, որ ժողովուրդները հարգանքի եւ ինքնորոշման հիման վրա պետք է հարաբերվեն: Իսկ Արցախն այդ ինքնորոշման հիման վրա ստեղծված պետություն էր: Հիմա սա եկել եւ ասում է, որ Արցախյան շարժումը սխալ էր, այսինքն՝ ՄԱԿ-ի կանոնագիրքը սխալ էր: Այն, ինչը հաղթել է ֆաշիզմին, ինքն ասում է՝ դա սխալ էր. ուղղակի ֆաշիստ: Այս ամենը ոչ միայն ազգային, այլեւ համամարդկային հարց է: Այստեղից հետեւում է, որ մենք՝ հայերս, միայն ազգային, ինքնության խնդիր չենք լուծում սրանց դեմ պայքարելով, մենք համամարդկային առաքելության մեջ ենք մտել, աշխարհում կարգուկանոն վերականգնելու գործն ենք կատարում:

- Գուցե Փաշինյանը գիտակցո՞ւմ է, թե իշխանությունից զրկվելու դեպքում ինչ է սպասվում իրեն, եւ իր այս խուճապը, գոռգոռոցը դրանով է պայմանավորված:

- Թուրքին բնորոշ պահվածք է, թուրքը ո՞նց կանցկացներ քարոզարշավ Հայաստանում: Եթե ընտրվի, ողջ հայության նկատմամբ է լինելու ատելությունը, որ արդեն սկսվել է, ասում է՝ ով մեզ չընտրի, շուն-շանգյալ է: Այսինքն, ով քաղաքական հայ է, շուն-շանգյալ է: Իսկ իրեն չի ընտրում նա, որն ասում է՝ դու մեզ զրկել ես տունուտեղից, դու պիտի գնաս: Ինքն ամբողջովին թուրքական քարոզչություն է իրականացնում արցախցիների դեմ: Հաջորդը լինելու է ոչ արցախցի հայերի դեմ: Հիմա մտավորականները եւ բոլոր ակտիվ մարդիկ պետք է հագնեն արցախցու ինքնություն կրող շապիկներ եւ ներկայանան, որ իրենք արցախցի են: Արցախցի լինելը միայն էթնիկ պատկանելություն եւ ծննդավայրի հարց չէ, այլ՝ համամարդկային քաղաքակրթական հասկացություն: Ու մենք՝ բոլորս, պետք է արցախցի լինելու այդ ոգեղեն պիտակը կրենք մեզ վրա եւ դրանով սրանց դեմն առնենք:

- Տեսնում ենք սադրանք, բռնություն, կալանավորումներ՝ ընդդիմադիր գործիչների նկատմամբ: Վախի ու բռնաճնշման միջոցո՞վ է ուզում իշխանությունը զավթել Փաշինյանը:

- Սա նոր բան չէ, 18-ին հենց եկավ իշխանության, ասֆալտին էր փռում, պատերին էր ծեփում, մաքսայինի աշխատողին էր գործից հանում, Արցախն ազատագրած գեներալներին ու քաղաքական գործիչներին էր կալանավորում, դատարաններն էր շրջափակում: Սա թուրքական քաղաքակրթության բնույթն է՝ ապօրինի հասնելու իրենց ուզածին: Որեւէ կարգուկանոն չընդունելու, որեւէ հարգանք չունենալու ֆաշիստական մոտեցումն է, այլոց կյանքի հանդեպ հարգանք չունենալով՝ նույնիսկ ընտանիքների դեմ է դուրս գալիս: Փաստորեն, Արցախի ռազմաքաղաքական վերնախավն ընդունեց «Բանտարկություն՝ հանուն ազատության» սկզբունքը: Հիմա իրենք այնտեղ բանտարկված են հանուն այն արցախցիների կյանքի իրավունքի ու ազատության, ովքեր այնտեղից դուրս են պրծել: Սա ես համեմատում եմ Իրանի հետ, որի առաջնորդները նահատակվեցին հանուն արդարության եւ իրենց ազատության: Այսինքն, մենք եւ իրանցիք այդ ժամանակահատվածում նույն նպատակին էինք ուղղում մեր առաքելությունը: Իրենք նահատակության սկզբունքով էին դա անում, մենք՝ բանտարկվելու: Եթե վերլուծենք Ադրբեջանում բանտարկված Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության գործունեությունը, նրանք կերտում էին Արցախ, որը ժողովրդավարություն էր զարգացնում: Իսկ Ադրբեջանում մի ընտանիք 30 տարի կառավարում է որպես բռնապետ: Արցախը դրա հակառակն էր՝ ժողովրդավարություն էր կերտում: Եվ Արցախի քաղաքական ղեկավարները միայն հայերիս իրավունքների համար չեն նստած: Այս պահին աշխարհի կարգուկանոնը, ժողովրդավարությունը դատվում են Բաքվի բանտերում: Եվ իրենց ազատելու գործընթացն ու վերջնական ակտն ուղղվում են ոչ միայն հայերիս իրավունքների պաշտպանությանը, այլեւ աշխարհի կարգուկանոնին ու ժողովրդավարությանը:

- Հայաստանը ոչ միայն աջակցում, այլեւ իր հերթին է բանտարկում Բաքվի «աչքի փուշ» գործիչներին: Ներդաշնակ երկխոսություն է:

- Հայաստանում Աշոտ Մինասյանն է նստած, Կանդասն է նստած, Յուրի Խաչատուրովին էին նստեցնում, Միքայել Արզումանյանին նստեցրին, Տիրան Խաչատրյանին ազգային հերոսի կոչում տվեցին ու փակեցին, լավագույն գեներալներին՝ Գրիգորի Խաչատուրովին բանտարկեցին: Բաքվում՝ Ալիեւը, Երեւանում՝ Փաշինյանը. սա այնքան ակնհայտ, այնքան պարզ է: Հիմա ինչոր ուժեր, ՀԿ-ներ ասում են՝ հիբրիդային պատերազմ եւ այլն, փողի դիմաց ասում են: Այդ մարդիկ ինչպես փողի դիմաց Արցախը հանձնեցին, այնպես էլ փողի դիմաց ծախում են մեզ: Անուններով գիտենք. Դանիելն է՝ Իոանիսյան, Գայանեն է՝ Աբրահամյան, Սաքունցն է, Լեւոնը՝ Բարսեղյան: Էդ բոլորը մեզ ծախել են փողի դիմաց: Իրենք հիմա էլ նույն բանն են անում, որ մենք Հայաստանում զրկվենք տունուտեղից: Շատ ակնհայտ է, խաղաքարտերը բաց դրված են սեղանին, մենք այլեւս ապացուցելու բան չունենք, մեզ պետք է մեր գործն անել: Կան եկեղեցիներ, որոնք հիմա զավթված են, պետք է ազատագրել այդ եկեղեցիները: Կան փողոցներ, շենքեր, որտեղ գտնվում են մեր թշնամիները, ովքեր սպանել են մեր ընտանիքի անդամներին եւ հիմա ասում են՝ ո՞ւր է Արցախը մերը եղել: Էդ բոլոր տեղերից իրենք ուղղակի պետք է դուրս շպրտվեն: Ազատագրվելու ընթացքի մեջ ենք մենք, որեւէ մեկին էլ համոզելու բան չունենք, ինչ-որ քաղաքացու: Այդ քաղաքացին միայն այն դեպքում մեր կողքին կլինի, երբ ազատագրենք եւ ցույց տանք, որ հնարավոր է, որովհետեւ կամ փողի դիմաց են սրանց կողքին, կամ էլ՝ վախի:

Մենք ֆիլմ էինք նկարում՝ մի քանի անգամ բռնագաղթված հայերի մասին պատմություններով, որոնք անցյալ դարի 80-ականներին էին գաղթել Ադրբեջանից, հիմա էլ՝ Արցախից: Ուզում էինք ցույց տալ, թե ինչ է նշանակում ադրբեջանցիների վերաբնակեցում Հայաստանում: Գնացինք Ամասիա, որ զրուցենք ժողովրդի հետ: Հիշում եք, մի ադրբեջանցի էր գնացել Ամասիա, ինքն իրեն նկարում էր եւ ասում, որ իր հայրենիքն է: Բոլորը վախի մեջ էին՝ ոչ մեկը չխոսեց, չէին ուզում երեւալ: Հետո մեզ սկսեցին հետեւել, ենթադրաբար՝ ԱԱԾ-ն էր, թե ուր ենք գնում, ում ենք տեսնում, որպեսզի խնդիրներ առաջացնեին նրանց համար, ովքեր կխոսեին: Եվ այս վախի մեջ ընտրության գնալ ու ասել, թե ընտրություններով Հայաստանում իշխանություն է որոշվելու, անհեթեթություն է: Վախի մեջ ապրող հասարակությունը չի կարող ազատ եւ արդար ընտրություն կատարել, նույնիսկ եթե քվեախցում մենակ է, բայց իր վախերն ուղեղի մեջ տանելու է քվեախցիկ, եւ գործողությունը կատարելու է վախը, ոչ թե ինքը:

- Կարո՞ղ ենք ասել, որ այս վախը մարդկանց անպաշտպան լինելու հետեւանք է, որ ընդդիմացողների հետ կարող են անել այն, ինչ ուզենան:

- Մի քանի օր առաջ Արմեն Հովհաննիսյանին սպանեցին, որ Նշավան գյուղից էր: Այնպես սպանեցին, ասես եղավ ու անցավ, իրենց քնչկանի ստերի նման: ՔՊ-ի պաստառն էր պոկել եւ լավ էր արել, քանի որ Կորսականում տուն ուներ այդ մարդը, տունը հանձնել էին, հասցրել խելագարության, եւ տեսնում է նրա ռոժը, որն իր տունը հանձնել է, բա ի՞նչ պիտի աներ, հո չէ՞ր պաչելու: Եվ ՔՊ-ական գյուղապետը, պատկերացնո՞ւմ եք, իր գյուղացու վրա դանոս է տալիս: Արմենին ձերբակալում են մի բանի համար, որը չէր արել: Եթե վարչական իրավախախտում դիտարկենք դավաճանի պաստառ պոկելը, առավելագույնը 100 հազար դրամի տուգանք պետք է լիներ, իրենք ձերբակալում են այդ մարդուն: Այսինքն՝ միանգամից Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 2 հոդված են խախտել՝ 7-րդը, որն ասում է՝ չես կարող մարդուն դատել մի բանի համար, որը չի արել, մյուսը՝ կյանքի իրավունքից զրկելը: Մենք՝ մտավորականներս, պետք է ձայն բարձրացնենք, քանի որ այդ մարդիկ անպաշտպան են մնում, մինչեւ հիմա նկարը չունենք Արմեն Հովհաննիսյանի: Ցավալին այն է, որ մեր ինքնության համար պայքարի դուրս եկած քաղաքական ուժերն այս անձնային դրամաների, ողբերգությունների հետեւից չեն գնում: Ի վերջո, ի՞նչ է Արցախը, ո՞ւր էր հայկական: Երբ այնտեղ հայեր էին ապրում, այսինքն՝ մարդուց է կախված, մարդուն է առնչվում: Սա ինչ որ արել է Արցախում, միայն եկեղեցիներն ու գույքը չեն, սա մարդկանց է վնաս հասցրել, եւ ամեն մարդու մեջ մի դրամա կա՝ սրա հասցրած վնասի հետեւանքով: Ցավոք, այդ դրամաներն առաջին պլան չեն մղվում: Երբ եկեղեցի են քանդում, մշակութային ցեղասպանություն են անում, մենք մեզ շատ վատ ենք զգում, իսկ երբ մարդն է ոչնչացվում, օրինակ, 60 հոգի մահացել է Արցախից դուրս գալու ճանապարհին: Ովքե՞ր էին այդ 60 հոգին, որտե՞ղ են անունները, նկարները, պատմությունները: Վերա Նարիմանյանի երկու մանկահասակ երեխաները մահացան, երբ գնացել էր սնունդ հայթայթելու, որտե՞ղ է հիմա Վերա Նարիմանյանը, ի՞նչ է անում: Մի տղա էլ սովից մահացավ՝ շրջափակման ժամանակ:

- Հնարավո՞ր է ընտրությունների ճանապարհով իշխանություն փոխել Հայաստանում:

- Եթե օրինական լինի, հնարավոր է, բայց մենք տեսնում ենք, թե Եվրոպան ինչպես է միջամտում, ինչ հիբրիդային սպանդ է իրականացնում, նաեւ՝ Թուրքիան եւ Ադրբեջանը, չեն էլ թաքցնում: Տեսանք, քարոզարշավի ժամանակ մարդ սպանեցին՝ Արմեն Հովհաննիսյանին, պետական սպանություն էր դա, մարդուն հասցրին նրան, որ ինքնասպան լինի: Տեսնում ենք, որ իրենց նախընտրական ծրագրում հստակ խոստում կա՝ եթե իշխանության գան, Սահմանադրությունը խախտելու են՝ կաթողիկոսին եկեղեցուց հեռացնելու են: Սահմանադրության 17-րդ հոդված. քրեական պատիժ է սահմանվում, պաշտոնեական դիրքի չարաշահում է, միջազգային իրավունքի խախտում: Այս պայմաններով այսպիսի մարդը չպետք է մասնակցեր ընտրություններին: Տեսնում ենք, թե ոնց են համայնքապետերի, քաղաքապետերի գլխին գործ սարքում, նստեցնում: Տեսնում ենք՝ Նիկոլին կպնող ֆեյսբուքյան գրառման համար քննչականը գործ է հարուցում: Ինքը կարող է փողոցում քայլել, սատկացնել-մատկացնելով խոսել, բայց իր դեմ գրառում անել չի կարելի: Հանրային հեռուստատեսությունը լրիվ սարքել են ՔՊ-ի օբյեկտը՝ ամբողջ երկրով մեկ սփռվելով, եւ արդեն մրցակցային հավասար պայմանները խախտված են: Այսինքն, խոսել նրա մասին, որ ընտրությունները լիովին ազատ եւ արդար են, աբսուրդ է: Նման բան ասելը նույնն է, որ ասես՝ Արցախում հայեր են ապրում, որ մեր վերահսկողության տակ է: Այս պայմաններում դժվար թե իշխանություն փոխվի: Բայց ընտրություններն ինչ արդյունք էլ ունենան, մենք մեզ պարտված չպետք է համարենք: Ինքը 99 տոկոս էլ հավաքի, չի հաղթելու: Հաղթել՝ նշանակում է, որ մեկն ընտրությունների է մասնակցում, որպեսզի գա եւ մեր համակեցությունն ապահովի՝ ըստ Սահմանադրության՝ ներպետական օրենքների եւ միջազգային իրավունքի: Սա արդեն Սահմանադրությունը մի քանի դրվագով խախտել է եւ մեզ անընդհատ պառակտում է, արցախցիների նկատմամբ ռասիզմ է տարածում: Սա որեւէ պարագայում չի կարող ընտրություններում հաղթել, կարող է իշխանությունը զավթել: Բայց երբ դու սահմանադրախախտ ես եւ հետո գալիս ես այդ Սահմանադրությունը խախտելու եւս մեկ խոստումով, դու վարչապետ չես, դու տեռորիստ ես, որովհետեւ օրենքներից դուրս ես գործում: Հիմա սա օրենքից դուրս իշխանություն է, ահաբեկիչ է:

Հուսիկ Արա

ՍԱՏԱՆԱՅԻՆ ՉԲԳԲԳԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

Որոշել ես մի այնպիսի բան անել, որ ընտրությունները չեղարկվեն… Ես ինչ իմանամ, Զելենսկին եղբայրդ է, ու, ինչքան չլինի, այդ հարցում, հավանաբար, փորձի փոխանակություն կատարած կլինեք: Թե՞ սխալվում եմ, եւ քո սիրտը միայն ու միայն ընտրություն է ուզում:

Բայց ոնց որ չէ… Քո պահվածքը բոլորովին այլ բան է հուշում, տղա ջան: Վախենում ես ընտրություններից ճիշտ այնպես, ինչպես Զելենսկին, որ անգամ պատերազմը չի դադարեցնում, որպեսզի ընտրություններ տեղի չունենան Ուկրաինայում:

Սոցհարցումներն օրեցօր վատացող վիճակիդ մասին են «ահազանգում», ընդդիմության վարկանիշը բարձրանում է, աչքովդ ես տեսնում, որ ժողովուրդը գիտակցության է գալիս 8 տարվա նոկդաունից հետո: Ճղճղոցներիդ նայող չկա, փաթաթած ունեն քեզ էլ, քո թիմին էլ, քո ճղճղոցներն էլ: Նախկինների թեման անգամ չես կարողանում նաղդել մերձավոր նախրիդ վրա: Եվ այսքանից հետո դու դեռ ցույց ես տալիս, որ նման ես ընտրությունների գնացող մարդու: Չեմ հավատում: Հավատալու չէ: Հակառակի պես էլ հետեւիցդ Ալիեւի ականջներն են երեւում: Այսպես որ շարունակվի, Թաթոյանը ճիշտ է ասում, մի գեղեցիկ օր էլ Ալիեւին կբերես Հայաստան, որ քեզ համար քարոզարշավ անի. «20-26-ին՝ համար 16-ին, յախշի՞»… Բառաններիդ հոտն էլ կձայնակցի՝ յախշի՛, յախշի՛…

Զորահանդեսը… Ինչի՞ համար է այս շոուն, ո՞ւմ ես ինչ ցույց տալու: Դեռ Սյունիքում էիր ասում՝ զորահանդես ենք անելու, որ ցույց տանք, թե էն 8,5 միլիարդն ինչի վրա ենք ծախսել: Խորհուրդ կտայի՝ մի քիչ կամաց քշել… Հանկարծ պետական գաղտնիք-մաղտնիք չհայտնեք թշնամուն: Հիմա դրա համար բռնում են: Անունն էլ դրել են «Հանրապետության օրվա միջոցառումներ», իբր՝ Սարդարապատի հաղթանակ, բանման: Էսքա՞ն էլ սուտ: Տղա ջան, 2018 թվականին Սարդարապատում այս օրը ռուսական «Կատյուշայի» տակ էիր պարում, այսօր Ռուբիո՞ն ես խաղացնում… Անգամ Հայաստանի Առաջին Հանրապետության ստեղծումն ես քաղաքականացրել ու դարձրել «բազառի թեմա»՝ արեւմտյան տերերիդ ցույց տալու, թե «ուղղություն» ես փոխում:

Աթոռիդ մարմաջից դրդված՝ զորահանդեսը քեզ համար նախընտրական PR-ի ես, հա՛, վերածում: Մարդիկ հո նախրիդ նման խոտակեր չե՞ն, աչք ունեն, տեսնում են: Բա մի ղեկավար, որ 8 տարի բանակի ոչ մի զորավարժություն չի արել, կհամարձակվի՞ զորահանդես անել: Հասկացանք, մի երկու անգամ Մոսկվայում զորահանդես ես տեսել… Մի՞թե դա բավարար է, որ հայտարարես՝ ես ամեն ինչ գիտեմ, ու առաջ ընկնես: Զինվորներդ պիտի քայլել իմանան, զենք բռնել, զորահանդեսի հրամանատարը (չգիտենք էլ՝ ով է) իր անելիքը պետք է իմանա, Պապիկյանին պիտի պտտեցնի զորքերի առաջ, որ բարեւի զինվորներին, իսկ հետո զեկուցի քեզ… Եվ ինչ է զեկուցելու Պնախարարդ, որ զորահանդեսի նախապատրաստությունները թողած՝ օրուգիշեր քարոզարշավների մեջ է, սրտիկ-մրտիկ է անում:

Երկու պարսատիկ եք անցկացնելու հրապարակով՝ ամբողջ քաղաքը կաթվածահար եք արել: Չինաստանում անգամ, որտեղ զինվորական շքերթին 1 միլիոնից ավելի զինվորական է մասնակցում, էլ չեմ ասում, թե ինչ տեխնիկա, այսպիսի բան չի պատահում: Թե բա՝ հնդկական ՀՕՊ միջոցներ ենք առել: Իսկ քանի՞ հրթիռ ունեք, որ այդ միջոցները մեզ պաշտպանեն, քանի՞ որպեւում այդ համակարգերը կսպառեն ձեր գնած հրթիռները, եթե, Աստված մի արասցե, ստիպված լինեք գործի դնել ՀՕՊ-ը: Բայց դա հոգ չէ ձեզ համար… Լեզու էլ հո ունեք: Այնպես դուրս կգաք տակից, որ էլ չասելու:

Զորահանդեսը վերջին փամփուշտն է, որ Փաշինյանը պատրաստվում է արձակել հոգուտ իր քարոզչության: Կստացվի՝ կստացվի, չի՞ ստացվի՝ հերն էլ անիծած, ընտրությունները չեղարկելու պատճառներ կգտնի: Տիգրանաշենում մի սահմանազատման փորձ, ու «խժդժությունն» արդեն պատրաստ է, ՌԴ դեսպանատան առաջ մի ապուշ հավաք, Մյասնիկյանի արձանի մոտ մի գժական ելույթ, ու, խնդրեմ, «հեղաշրջման փորձն» առկա է: Փաշինյանին շատ էլ կարիք չկա խնդրելու, որ գնա նման քայլերի: Մարդն իր առջեւ խնդիր է դրել Արեւմուտքի համար պահպանել ՀՀ վարչապետի աթոռը: Թեկուզ մի 5 հազար մարդ էլ զոհվի, նրա համար ոչ մի նշանակություն չունի: Կկրակի, կավերի, ավտոներ շուռ կտա… Առաջին անգամը չէ: Այս անգամ Արեւմուտքը նրա ցավոտ տեղերից չափից ավելի պինդ է բռնել, ու վայը կգա գլխին, եթե չկատարի վերարտադրվելու խոստումը: Ինքն Արեւմուտքին պետք է բացառապես վարչապետի կարգավիճակով:

Այս իրավիճակում ընդդիմությանն այլ բան չի մնում, քան սատանային ավելորդ սադրանքների չենթարկելը: Կարիք չկա: Ինքն առանց այն էլ խռովված է մոտալուտ պարտության մտքից, եւ չարժե նրան այդ մասին անընդհատ հիշեցնել: Պետք է մի կերպ հասնել հունիսի 7-ին՝ թքած ունենալով նրա բոլոր «բզբզոցների» վրա: Մոտավորապես այսպես՝ հա, քո ասածն ա, խաղաղություն ա, Ախալքալաք-Կարս երկաթուղին մերն ա, Ջերմուկն էլ Շվեյցարիա ենք արտահանելու… Հանգստացրեք՝ ինչքան կարելի է, որ հունիսի 7-ին ժողովուրդը հնարավորություն ունենա անխռով գնալ ընտրատեղամաս եւ մերժել 16-ին: Դե իսկ ամսի 8-ին նրա բոլոր ջղաձգումները կդառնան ժամանակավրեպ:

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ



բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 26.05.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԿԻԼԻԱՆ ՄՅՈՐՖԻ. ԴԵՐԱՍԱՆ, ՈՐԸ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ Է ՊԱՀԵԼ ԻՐ ԴԻՄԱԳԻԾԸ

Դամանակակից կինոարվեստում սովորաբար շատ դժվար է մնալ բոլորի ուշադրության կենտրոնում, լինել քննարկվող: Դրա համար պետք է գրեթե մշտապես ներկա լինես սոցկայքերում, աղմկոտ հարցազրույցներ տաս, քո մասին նյութերը մամուլում հրապարակվեն սկանդալային վերնագրերով: Այս ամբողջ թոհուբոհի մեջ իռլանդացի դերասան Կիլիան Մյորֆին, կարելի է ասել, քիչ բացառություններից է: Նա համարյա իր անձնական կյանքի մասին չի խոսում, խուսափում է հոլիվուդյան բոհեմական կյանքից եւ նախընտրում է, որ իր մասին խոսեն իր կերտած դերերը: Թերեւս դրա համար էլ առաջին հայացքից նրա համաշխարհային հռչակն ու փառքը մի փոքր անսովոր կարելի է համարել:

Նրա կենսագրությունն ու անցած ուղին ուսումնասիրելիս տպավորություն է ստեղծվում, որ չի էլ ցանկացել դառնալ համաշխարհային հռչակ ունեցող դերասան, սակայն դարձել է՝ պարզապես այն պատճառով, որ «երկնային ուժերը նրա կողմից են եղել»: Մյորֆին ծնվել է 1976 թվականի մայիսի 25-ին, իռլանդական Քորք քաղաքում: Վաղ տարիքում լրջորեն հետաքրքրվել է երաժշտությամբ, նույնիսկ հանդես է եկել ռոք-խմբում՝ եղբոր հետ: Սակայն աստիճանաբար նախ՝ թատրոնը եւ ապա՝ կինոարվեստը նվաճել են նրան եւ տեղ չեն թողել երաժշտությամբ զբաղվելու համար: Դերասանական կարիերան սկսել է թատերական բեմից: Նրա առաջին լուրջ աշխատանքը Disco Pigs պիեսն է, որը հետո էկրանավորվել է: Լայն ճանաչում է գտել 28 Days Later կինոնկարի թողարկումից հետո, որի ռեժիսորն էր Դենի Բոյլը: Այն 21-րդ դարասկզբի բրիտանական սարսափ կինոնկարների շարքում ամենահայտնի օրինակներից է, իսկ Ջիմի կերպարը՝ Մյորֆիի մարմնավորմամբ, ճանաչելի է դառնում Իռլանդիայի սահմաններից շատ հեռու: Հետագայում Մյորֆին խոստովանում է, որ հենց այդ կինոնկարն է ճանապարհ բացել իր համար միջազգային կինոարվեստի համար: Հատկապես կարեւոր էր Մյորֆիի եւ ռեժիսոր Քրիստոֆեր Նոլանի համագործակցությունը: Նրանց համագործակցությունը սկսվել էր Batman Begins-ով, որին հաջորդել էին Inception, Dunkirk կինոնկարները եւ, վերջապես՝ Oppenheimer-ը: Հենց ֆիզիկոս Ջի. Ռոբերտ Օփենհեյմերի կերպարի մարմնավորումն է, որ Մյորֆիին բերում է համաշխարհային ճանաչման նոր մակարդակ: Գիտնականի կերպարը մարմնավորելու համար դերասանը խիստ նիհարում է, շատ է աշխատում պատմական նյութերի վրա, փորձում է ցույց տալ ոչ միայն իր հերոսի ինտելեկտը, այլ նաեւ ներքին ողբերգականությունը: Քննադատները նրա խաղն անվանում են «մագնիսական» եւ «հիպնոսային»:

2024-ին Մյորֆին ստանում է «Օսկար»՝ լավագույն դերի համար՝ դառնալով առաջին իռլանդացին, որն այդ կատեգորիայում ստանում է նման բարձր մրցանակ: Միլիոնավոր երկրպագուների համար, սակայն, նա շարունակում է մնալ Թոմաս Շելբին՝ Peaky Blinders սերիալից: Սառը հայացք, զուսպ պահվածք եւ շարժուձեւ, չոր խոսվածք, ներքին լարվածություն. այս գծերի շնորհիվ էլ Թոմասի կերպարը դառնում է կուլտային: Հետաքրքիր է այն, որ նախապես սերիալի ստեղծողները կասկածել են, թե այդ դերի համար արդյոք Մյորֆին հարմա՞ր է: Ասում են, որ անձնական ինքնավստահության շնորհիվ է Մյորֆին այդ դերը ստացել:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am